ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

ՀԻՄՆԱԴՐԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆԻԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍՑԵ՝ Ք.ԿՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 • (077) 06 28 02

Սյունյաց երկիր

ՏԱՍՆՕՐՅԱ ԹԵՐԹ

Գինը՝ 100 դրամ:

ՇԱԲԱԹ
15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2012Թ • № 24 (265)

www.syuniacyerkir.am

Քաղցած, քոսոտ, անբուրդ, դեպի լյառը Մասիս Քայլում է առասպելյալ մեր գայլը...

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

ՄԵՂՐՈՒ ԸՆՏՐՅԱԼ ՔԱՂԱՔԱՊԵՏԸ

Արշավիր Վարոսի Հովհաննիսյան. ծնվել է 1965թ. դեկտեմբերի 30-ին Մեղրի քաղաքում: 1982թ. ավարտել է տեղի Ստեփան Շահումյանի անվան միջնակարգ դպրոցը: 1982-84թթ. աշխատել է Մեղրու ՇՄՇ 80-ում, ապա՝ ԲՈՒԱՏՋ-ում՝ բանվոր: 1984-86թթ. ծառայել է խորհրդային բանակում: Զորացրվելուց հետո ընդունվել է (առանց արտադրությունից կտրվելու) Հայաստանի պետական գյուղատնտեսական ինստիտուտը եւ ավարտել տնտեսագետի որակավորմամբ: 1986-88թթ. աշխատել է «Հայգյուղտեխնիկա» արտադրական միավորումում՝ տնտեսագետ: Այնուհետեւ (մինչեւ 1993թ.) կրկին աշխատել է Մեղրու ԲՈՒԱՏՋ-ում: 1995-96թթ. Մեղրու մաքսակետի տեսուչն էր, 1996-97թթ.՝ Մեղրու հարկային տեսչության քաղաքացիական հարցերով տեսուչը: 1997 թվականից մինչեւ այժմ զբաղվում է ձեռնարկատիրական գործունեությամբ: Որեւէ կուսակցության մինչեւ հիմա չի անդամակցել: Ամուսնացած է, երեք զավակի հայր է: Կրտսերը սովորում է հանրակրթական դպրոցում, իսկ ավագ որդին ու դուստրը Երեւանում բարձրագույն կրթություն ստանալուց հետո վերադարձել եւ աշխատանքի են անցել Մեղրիում:

Սիսիանից նահանջած ՀՀԿ-ն մերժվեց նաեւ շրջանի մի քանի գյուղերում

Սիսիանի նախընտրական վիճակի, ինչպես եւ այդ ընթացքում տեղի ունեցած ընտրական գործընթացների մասին այսօր արդեն կարելի է սպառիչ խոսք ասել:

ՏԻՄ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախ՝ ընտրողների գրեթե կայուն թվաքանակի պարագայում (2008-ին՝ 11689, 2012թ. մայիսի 6-ին՝ 11970, 2012թ. սեպտեմբերի 9-ին՝ 12162) սեպտեմբերի 9-ի քվեարկությանը սիսիանցիները համեմատաբար պասիվ մասնակցություն ունեցան (2008-ին՝ 7644, 2012թ. մայիսի 6-ին՝ 7481, 2012թ. սեպտեմբերի 9-ին՝ 6772):

Որոշակիորեն նվազել է Սիսիանի քաղաքապետի աթոռի համար երկու հիմնական մրցակցի վստահության ռեսուրսը: Աղասի Հակոբջանյանը 2008-ին ստացել է 3951, այս անգամ՝ 3536 ձայն (415-ով պակաս): Տիգրան Պողոսյանը 2008-ին ստացել է 3319, այս անգամ՝ 2744 ձայն (575-ով պակաս):

Ս.թ. մայիսի 6-ի ընտրություններից հետո, երբ Սիսիան քաղաքում ՀՀԿ-ն իր դիրքերը զիջեց ԲՀԿ-ին, Հանրապետականը հերթական պարտությունը կրեց շրջանի մի քանի գյուղում՝ Դարբաս, Նորավան, Իշխանասար, Որոտան: Դարբասում ՀՀԿ-ական Ռոբերտ Խաչատրյանին փոխարինեց անկուսակցական Մայիս Միրզոյանը, Իշխանասարում ՀՀԿ-ական Մարատ Պետրոսյանին փոխարինեց անկուսակցական Արարատ Պետրոսյանը, Նորավանում ՀՀԿ-ական Լավրենտիկ Առաքելյանին փոխարինեց անկուսակցական Սլավիկ Պապյանը, Որոտանում ՀՀԿ-ական Գավրուշ Դավթյանին փոխարինեց ԲՀԿ-ական Սերյոժա Ամիրխանյանը:

Սիսիանում, սակայն, հարցերի հարցը մնում է ՀՀԿ-ի պահվածքը: Վերջին պահին, իհարկե, հայտարարվեց, որ ՀՀԿ-ն Սիսիանի քաղաքապետի թեկնածուներից որեւէ մեկին չի սատարում: Բայց դա, կարծեք, ուշացած եւ անհմաստ հայտարարություն էր: Մինչ այդ ՀՀԿ-ն արդեն իսկ արել էր այն, ինչ պետք էր Աղասի Հակոբջանյանին՝ հաղթանակի հասնելու համար: ՀՀԿ-ն արգելել էր Գառնիկ Հովակիմյանին՝ մասնակցելու քաղաքապետի ընտրությանը: Վերջինիս առաջադրման պարագայում, անտարակույս, Սիսիանում այլ ընտրապայքար եւ այլ արդյունքներ կլինեին: Բայց ՀՀԿ-ն չուզեց, որ ՀՀԿ-ական Գառնիկ Հովակիմյանը դառնա Սիսիանի քաղաքապետ, ՀՀԿ-ն կամեցավ, որ Սիսիանի քաղաքապետ դառնա ԲՀԿ-ական Աղասի Հակոբջանյանը: Ովքեր եւ ինչ մեթոդով են

Շարունակությունը՝ էջ 2

Մեղրին քվեարկեց հօգուտ նոր քաղաքապետի՝ մերժելով այնտեղ իրականացվող վիճահարույց քաղաքականությունը

Անկուսակցական Արշավիր Հովհաննիսյանը 113-ով ավելի քվե ստացավ (1107 ձայն), քան իր գլխավոր մրցակիցը՝ գործող քաղաքապետ, ՀՀԿ-ի թեկնածու Սերգեյ Հայրապետյանը (994 ձայն): 456 ձայն էլ ստացավ ՀՀԿ անդամ Միշա Հովհաննիսյանը, ով ավելի վաղ նույնպես եղել է Մեղրու քաղաքապետ (Մեղրիում 3538 ընտրողից քվեարկության մասնակցել է 2685 հոգի, 106 քվեաթերթիկ համարվել է անվավեր):

Շարունակությունը՝ էջ 2

Ովքե՞ր են, ի վերջո, Կապանի քաղաքապետի թեկնածուին զրկել քվեարկվելու սահմանադրական իրավունքից

ՀԱՄԱՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՐՑԸ

Հարցը շարունակում է մնալ ամենագլխավորը Սյունիքի մարզի հասարակական-քաղաքական ու պետական կյանքում: Հարցը շարունակելու է պահպանել հրատապությունը, քանի դեռ օգոստոսի 29-ի լույս 30-ի գիշերը Կապանում կատարվածը չի բացահայտվել: Եվ այս պարագայում ծիծաղելի են բոլոր նրանք, ովքեր դեմքի լուրջ արտահայտությամբ ներկայումս արծարծում եւ քննարկում են սեպտեմբերի 9-ին Կապանում արձանագրված թվերը՝ 30496 ընտրող, 17365 մասնակից, մեն միակ թեկնածուին՝ 10261 կողմ, 6075 դեմ, անվավեր քվեաթերթիկներ՝ 858: Ոմանք, իբրեւ ազատ կամքի դրսեւորման արտահայտություն, անընդհատ տարփողում են, որ մեն միակ թեկնածուին մոտ 7000 մարդ կողմ չի քվեարկել: Իրականում, կրկնում ենք, սեպտեմբերի 9-ի քվեարկության արդյունքների լրջացումը կապանյան դարակազմիկ ծաղրերգության հերթական եւ առավել անբարո արիան է: Առհասարակ չի կարելի լուրջ վերաբերվել Կապանի համայնքի ղեկավարի սեպտեմբերի 9-ի քվեարկությանը, քանի որ քաղաքապետի պաշտոնի (ըստ սոցիոլոգների) գլխավոր հավակնորդին զրկել են քվեարկվելու սահմանադրական իրավունքից: Արդյունքում, ըստ էության, կապանցին զրկվել է իր համայնքի ղեկավարին ընտրելու հնարավորությունից: Եվ այդ ամենից հետո ամոթ է քվեարկության արդյունքների մասին լուրջ խոսակցություն ծավալելը: Առավել անլուրջ է հրապարակված թվերի հավաստիության մասին խոսելը:

Մեզ համար շարունակում է զարմանալի մնալ իրողությունը, որ իրավապահ մարմիններն այդպես էլ ի գիտություն չեն ընդունում Արտուր Աթայանի եւ ՀՅԴ «Արամ Մանուկյան» կոմիտեի հայտնի հայտարարությունները եւ հետաքննություն չեն սկսում քաղաքապետի թեկնածուի առեղծվածային ինքնաբացարկի առիթով:

Իսկ ովքե՞ր են, ի վերջո, կապանցուն զրկել քաղաքապետ ընտրելու հնարավորությունից: Շրջանառվող տարբեր ասեկոսեներից վեր կանգնելու համար եւս մեկ հարց է ծագում՝ հավատա՞նք, որ Սյունիքի մարզկենտրոնում իշխանության ձեւավորման գործին կատարված գռեհիկ միջամտությունը կատարվել է առանց երկրի ղեկավարության: Մենք, օրինակ, չենք հավատում, որ դա կարող էր կատարվել տեղական ուժերի ինքնագործունեությամբ: Այլ հարց է, թե երկրի ղեկավարության հրահանգն ովքեր եւ ինչ

Շարունակությունը՝ էջ 2

Այսօրվա երկիր
www.syuniacyerkir.am

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի Ց ■ ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ

ՇԱԲԱԹ • 15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2012Թ • № 24 (265)

ՏԻՄ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սիսիանից նահանջած ՀՀԿ-ն մերժվեց նաեւ շրջանի մի քանի գյուղերում

Սկիզբը՝ էջ 1

Գառնիկ Հովակիմյանի ճանապարհը փակել՝ այնքան էլ դժվար չէ կռահել:

Տիգրան Պողոսյանի թիմը, ինչպես ցույց տվեց սեպտեմբերյան ընտրությունը, այլեւս 2008-ի թիմը չէր: Չկար երբեմնի ակտիվությունը, չկար երբեմնի ոգեւորությունը: Տիգրան Պողոսյանը, պարզվեց, փնտրված մրցակից էր Աղասի Հակոբջանյանի համար: Սիսիանցիներից մեկը դիպուկ բնութագրեց երկու թեկնածուի հանդեպ հանրային վերաբերմունքը. **«Եթե Աղասի Հակոբջանյանի հանդեպ կա որոշակի ատելություն եւ մերժողական վերաբերմունք, ապա Տիգրանի հանդեպ չկա երբեմնի սերն ու համակրանքը»:**

Ստեղծված իրավիճակում ծիծաղելի էր (եթե ոչ ողորմելի) Հրաչիկ Խաչատրյան թեկնածուի դերակատարությունը: Ո՞վ էր այդ թեկնածուն, ի՞նչ էր ուզում՝ այդպես էլ չհասկացանք: Եթե նրան իսկապես Քոչար Դավթյանն է խաղի մեջ մտցրել, ապա, թույլ տվեք ասել, սխալ է գործել:

Հաղթանակի հասնելու հակոբջանյանական մեթոդի մասին այսօր շատերն են խոսում Սիսիանում: Բայց դա թողնում ենք նրա խղճին… Մի բան կարող ենք ասել՝ եթե այդ ասեկոսեները գոնե մասամբ համապատասխանում են իրականությանը, ապա դա էլ ավելի է ամլացնում նրա բարոյական ռեսուրսն ու հաղթանակի իմաստը:

Տիգրան Պողոսյանի հրավիրած հանրահավաքի երկու-երեք ելույթում Աղասի Հակոբջանյանի հասցեին հնչած խոսքերը շատ մոտ էին հայհոյանքի ժանրին: Մեղավորը, սակայն, ելույթ ունեցողները չէին: Աղասի Հակոբջանյանը, կարծում ենք, դրա պատճառները նախեւառաջ իր մեջ պետք է փնտրի եւ պատասխանի հարցին, թե ինչու են այլեւս Սիսիանի քաղաքապետի հետ խոսում հայհոյանքի լեզվով: Նա պետք է ամեն գնով բարձրանա եւ կանգնի բարոյական այն պատվանդանին, որի վրա կանգնածներին քննադատում են, բայց չեն հայհոյում: Իսկ դրան հասնելու բազում ճանապարհներից մեկը հետեւյալն է՝ սթափ, առանց հույզերի, փաստարկված պատասխանել բոլոր այն քննադատություններին (նաեւ մամուլում տպագրված), որոնք հնչել են վերջին ամիսներին եւ որոնց պատասխանը հանրությունը դեռ չի ստացել:

Ամփոփում. բոլոր դեպքերում շարունակում ենք մնալ կարծիքին, որ ՀՀԿ-ն մեծագույն հաճույքով Սիսիանը փռեց ԲՀԿ-ի ոտքերի տակ՝ հայտնի պատճառով: Եվ ուրեմն, որքան էլ ցավալի է ու անցանկալի, Աղասի Հակոբջանյանն առաջիկա չորս տարում չի կրելու ընտրյալի պսակը: Արձանագրված արդյունքների համար նա պարտական է նախեւառաջ ՀՀԿ-ին: Այդուհանդերձ մենք նրան հաջողություն ենք մաղթում եւ առաջացած դժվարությունների հաղթահարում: Բոլոր թերություններով, բացթողումներով հանդերձ, Աղասի Հակոբջանյանը, սակայն, արդեն իսկ մտել է պատմության մեջ: Նրան է պատկանում Հանրապետականը Սիսիանից դուրս մղելու (որ տեղի ունեցավ ս.թ. մայիսի 6-ին) դափնին:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Մեղրին քվեարկեց հօգուտ նոր քաղաքապետի՝ մերժելով այնտեղ իրականացվող վիճահարույց քաղաքականությունը

Սկիզբը՝ էջ 1

Սերգեյ Հայրապետյանի պարտությունը, այսօր արդեն կարելի է ստույգ ասել, իր անձնական պարտությունը չէր: Սեպտեմբերի 9-ին Մեղրին «ոչ» ասաց մեր իշխանությունների կողմից այդ շրջանում տարիներ շարունակ իրականացվող կասկածելի, վիճելի եւ խնդրահարույց քաղաքականությանը, ինչին մեր թերթում քանիցս անդրադարձել ենք: Սերգեյ Հայրապետյանը միգուցեեւ պարտություն չկրեր, եթե ՀՀԿ-ն (այդ մասին ասել ենք մեր նախորդ հրապարակումներում) այնտեղ լիներ համախումբ, կուռ, կազմակերպված կառույց եւ կարողանար հանդես գալ միասնական թեկնածուով, եթե Միշա Հովհաննիսյանն իր հերթին ճակատ չբացեր: Միշա Հովհաննիսյանի թեկնածության շուրջ, առաջադրման օրվանից սկսած, տարբեր խոսակցություններ էին թեւածում: Ոմանք մինչեւ հիմա էլ կարծում են, որ Միշա Հովհաննիսյան թեկնածուն խաղի մեջ էր մտցվել քաջարանյան անփառունակ կլանի կողմից՝ Արշավիր Հովհաննիսյանի հաղթանակը կասեցնելու համար: Իրականում, մինչդեռ, Միշա Հովհաննիսյանն ինքնաառաջադրման անձնական դրդապատճառներ ուներ: Ինը տարի Մեղրին ղեկավարած ու ՀՀԿ-ին բազում ծառայություններ մատուցած այդ անձնավորությունը չորս տարի շարունակ անգործ է: Ըստ երեւույթին հենց դա էր պատճառը, որ նա չմիացավ Հանրապետականի կողմից թեկնածու առաջադրված Սերգեյ Հայրապետյանին, ով 2008-ին հաղթել էր իրեն, իսկ 2005-ին՝ պայքարել իր դեմ: Սերգեյ Հայրապետյանի պարտությունը, ըստ մեղրեցիների, այդպես անցնցում չէր կայանա, եթե Մաքսիմն ու նրա պատգամավոր որդին չայցելեին Մեղրի: Սեպտեմբերի 3-ին մարզպետի հետ նրանք էլ Մեղրիում էին եւ հորդորում էին ընտրել Սերգեյ Հայրապետյանին, ինչը շատերին կասկածելի թվաց: Քանի-քանի մարդիկ մեզ հարցրին՝ այդ ի՞նչ անձնական շահ ունեն հայր ու որդի Մեղրիում, որ եկել ու ընկել են մեղրեցիների ոտքերը, հո երկրի, Մեղրու շահի համար նրանք այդքան չէի՞ն նվաստանա: Մեկն էլ ավելի կտրուկ արտահայտվեց՝ Քաջարանը զոմբիացրել են, փորձեցին Կապանը մուռտառել՝ մեծամասնության մոտ սրտխառնուք առաջացավ, հիմա էլ Մեղրի՞ն են ուզում հարամել… Ինչեւէ, Մաքսիմի ու որդու այցից հետո շատ մեղրեցիներ (նույնիսկ չինովնիկներ) Սերգեյին այլեւս իրենցը չէին համարում:

Ի դեպ, Մեղրիում էլ իշխանական մեքենան աշխատեց, աշխատեց ամբողջ կարողությամբ ու մեթոդներով, բայց մեղրեցին չընկրկեց, մնաց աննվաճ եւ իր քաղաքապետին ինքն ընտրեց:

Մեր կարծիքով՝ մեկ ուրիշ հանգամանք էլ դեր խաղաց: Սերգեյ Հայրապետյանը, հատկապես Մեղրուն առնչվող պրոբլեմատիկ հարցերում, պետք է ավելի անկախ, ավելի ինքնուրույն լիներ, իր դիրքորոշումների մեջ կառչած չլիներ վերեւների կարծիքից: Իսկ ինքը կարող էր դա անել:

Հիմա այդ ամենն անցյալ է արդեն: Հիմա ասպարեզում Արշավիր Հովհաննիսյանն է՝ օրինական պսակով: Նրան հավատացին մեղրեցիները, հատկապես երիտասարդությունը գնաց նրա հետեւից: Ուստի Արշավիր Հովհաննիսյանը պարտավոր է ապացուցել, որ կարող է ավելին անել, քանի արել են Սերգեյ Հայրապետյանն ու Միշա Հովհաննիսյանը: Նա պետք է ապացուցի, որ կարող է պատվախնդրորեն ու արժանապատվորեն պաշտպանել Մեղրու շահը: Նա պետք է կարողանա դառնալ բոլոր մեղրեցիների քաղաքապետը ու պիտի մոռանա հանգամանքը, որ համայնքի ու տարածաշրջանի բոլոր իշխանավորները համախմբված էին քաղաքապետի թեկնածու Սերգեյ Հայրապետյանի շուրջ: Նա նախեւառաջ պիտի կարողանա իր դեմ քվեարկած մեղրեցիների առաջնորդը դառնալ: Իսկ ժամանակն այնքան էլ շատ չէ: Ուրեմն՝ բարի երթ Մեղրու ընտրյալ քաղաքապետ Արշավիր Հովհաննիսյանին:

■

Ովքե՞ր են, ի վերջո, Կապանի քաղաքապետի թեկնածուին զրկել քվեարկվելու սահմանադրական իրավունքից

Սկիզբը՝ էջ 1

մեթոդներով են ի կատար ածել:

Արտուր Աթայանին՝ իբրեւ մարդու, իբրեւ քաղաքապետի, հասկանում ու հավատում ենք, գնահատում ու մեծարում ենք: Պատահական չէ, որ նրա անվանն այլեւս միացված է հայտնի գնահատականը՝ «Բոլոր կապանցիների քաղաքապետ», ինչի հետ մենք նույնպես համաձայն ենք: Սակայն, իբրեւ քաղաքական գործչի, դատապարտում ենք ինքնաբացարկ տալու նրա քայլը: Ստորագրելով ինքնաբացարկի դիմում՝ նա սխալ է գործել ոչ միայն Կապանի, այլեւ ամբողջ Սյունիքի հանդեպ: Նա շատ լավ գիտեր, որ սեպտեմբերի 9-ին խաղատախտակին դրված է ոչ միայն Կապանի քաղաքապետի, այլեւ Սյունիքի վարչական-օլիգարխիկ համակարգի ճակատագիրը: Նա շատ լավ գիտեր, որ այդ պահին ինքը միայն իրեն ու իր ընտանիքին չի պատկանում, այլ՝ ամբողջ Կապանին, բայց…

Եվ նորից հայտնի հարցը՝ ի՞նչ է տեղի ունեցել օգոստոսի 29-ի լույս 30-ի գիշերը Կապանում: Հարցի պատասխանից, ինչպես երեւում է, խուսափում են բոլորը: Միգուցեեւ տրամաբանական է, որ դրանից խուսափում են նաեւ Արտուր Աթայանը, ՀՅԴ գերագույն մարմինը, «Արամ Մանուկյան» կոմիտեն: Միգուցեեւ կան հարցեր, որ հասարակ մահկանացուներս չպետք է իմանանք: Բայց, հավատացեք, դա այլեւս նրանց խնդիրը չէ միայն: Ի վերջո, մարդիկ պետք է իմանան, թե ինչ է կատարվում իրենց շուրջը, թե ինչպես են համայնքային իշխանություն ձեւավորում մեզանում, թե ովքեր են (հանուն իրենց անձնական եւ ոչ պետական շահի) մարդկանց զրկում ընտրելու եւ ընտրվելու իրավունքից:

Պաշտոնական ատյանների եւ կողմերի լռությունը, սակայն, չի խանգարում, որ հանրությունն իր համար յուրօրինակ «հետաքննություն» վարի եւ օգոստոսի 29-ի լույս 30-ի գիշերային արկածախնդրության մասին որոշ մանրամասներ ջրի երես հանի: Ըստ շրջանառվող խոսակցությունների՝ օգոստոսի 29-ի ցերեկն Արտուր Աթայանի հետ երկու անգամ զրույց է ունեցել Կապանում ոչ անհայտ Վլադիկ Առաքելյանը (Բդո մականունով): Թե ում բանագնացը կարող էր լինել ներկայանալի այդ անձնավորությունը, ամբողջ Կապանում գիտեն: Թե ինչ հարցեր կարող էին նրանք քննարկել, դա եւս ենթադրելի է: Մեկ այլ աղբյուրի վկայությամբ՝ նույն օրը «դեսպան» Բդոյի հանդիպումներից հետո տեղի է ունեցել Արտուր Աթայանի եւ Մաքսիմի հանդիպումը, որի արդյունքների մասին ոչինչ հայտնի չէ: Ժամը 23-ի սահմաններում Արտուր Աթայանի բնակարան է այցելել իր բարեկամը՝ Աժ նախկին պատգամավոր Գագիկ Գեւորգյանը, ով, կարծում ենք, զորակցելու առաքելություն է ունեցել: Նրա հեռանալուց հետո՝ ժամը 24-ի սահմաններում, Արտուր Աթայանը հեռախոսազանգ է ստացել: Խոսակցությունը չի ցանկացել վարել ընտանիքի անդամների ներկայությամբ եւ դուրս է եկել բակ ու մոտ 30 րոպե խոսակցություն ունեցել մեզ համար դեռեւս անհայտ անձնավորության հետ, որից հետո նա ակնհայտ ընկճված եւ հուսահատ վիճակում է հայտնվել: Նույն գիշերը խիստ վատթարացել է Արտուր Աթայանի առողջական վիճակը եւ բժիշկների ջանքերի շնորհիվ է միայն դրությունը փրկվել: Բոլոր այս տեղեկությունները, սակայն, չեն պատասխանում հարցին, թե ինչ է, այնուամենայնիվ, տեղի ունեցել Արտուր Աթայանի հետ օգոստոսի 29-ի լույս 30-ի գիշերը: Ստույգ է մի բան՝ օգոստոսի 30-ի առավոտյան Արտուր Աթայանն արդեն պատրաստ էր ստորագրելու ինքնաբացարկի դիմումը: Դա այն Արտուր Աթայանն էր, ով օգոստոսի 29-ին, ժամը 20-ի սահմաններում, մեզ հետ ունեցած հեռախոսազրույցում հայտարարել էր. **«Ընտրապայքարը չշարունակելու պատճառ չկա, գնում եմ մինչեւ վերջ»:**

Օգոստոսի 29-ին, որքանով տեղյակ ենք, նա պատրաստվում էր հեռուստաելույթի (ուներ ելույթի մի քանի տարբերակ), որոնցից մեկը պետք է հրապարակեր օգոստոսի 30-ին՝ օրվա երկրորդ կեսին: Այդ ելույթով պատրաստվում էր հանրապետության նախագահի եւ Հայաստանում հավատարմագրված օտարերկրյա դիվանագետների ուշադրությունը հրավիրել Կապանում տեղի ունեցող նախընտրական իրադարձությունների վրա: Նա պատրաստվում էր անուն առ անուն հրապարակել բոլոր այն մարդկանց ու վարձկանների անունները, ովքեր վերջին օրերին հակաօրինական գործողություններ էին իրականացրել իր եւ թիմակիցների հանդեպ, բայց գիշերային իրադարձությունները կանխեցին նաեւ այդ մտադրության իրականացումը:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՏԻՄ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գնդապետների մենամարտ Տեղ գյուղում

Սեպտեմբերի 9-ին Գորիսի շրջանի հատուկենտ համայնքներում տեղի ունեցավ համայնքի ղեկավարի ընտրություն: Գյուղերի մեծ մասում ընտրությունների անվան տակ կազմակերպվեց գործող եւ խունացած գյուղապետերի մեխանիկական վերարտադրություն… Այդ ամենով հանդերձ՝ շրջանի մի քանի գյուղում տեղի ունեցան մարտեր՝ համայնքի ղեկավարի աթոռը պահելու կամ նվաճելու համար: Նման համայնքների թվում, նախեւառաջ, Տեղ գյուղն էր, որի շուրջ, դեռեւս մինչեւ ընտրություններ, աղմուկ էր բարձրացել ամբողջ հանրապետությունով մեկ:

Ինչո՞վ էր պայմանավորված այդ լարվածությունը Տեղում: Նախ՝ դա հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի նախնիների գյուղն է, եւ, բնականաբար, որոշակի հետաքրքրություն էր ներկայացնում այդ առումով: Ավելին, թեկնածուներից մեկը՝ գործող գյուղապետ Սաղաթել Գալստյանը, նախագահի հոր՝ Ազատ Սարգսյանի բարեկամներից է: Երկրորդ, գործող գյուղապետն Արամ Գալստյանի հորեղբայրն է, ով Սյունիքի եւ Վայոց ձորի մարզերի ճանապարհային ոստիկանության վաշտի հրամանատարն է, փոխգնդապետ: Գործող գյուղապետին ձեռնոց էր նետել Մարտուն Պողոսյանը, ով Արցախյան ազատամարտում համբավ ձեռք բերած Տեղի ինքնապաշտպանական ջոկատի հրամանատար, ներկայումս Գորիսի զինվորական կոմիսար Մելիքսեթ Պողոսյանի (Մելո) եղբայրն է: Այդ հանգամանքներն էլ պատճառ էին դարձել, որ սեպտեմբերի 9-ի Տեղի ընտրություններն ի սկզբանե որակվեին Մելիքսեթ Պողոսյանի եւ Արամ Գալստյանի մենամարտ՝ գյուղում լիդերության համար:

Տեղ գյուղն Արցախյան ազատամարտում ամենատուժած գյուղն է Գորիսի շրջանում (Կորնիձորից հետո): Միայն խաղաղ բնակիչներից այնտեղ 39 մարդ է զոհվել: Գյուղը տվել է ճանաչված ազատամարտիկներ, ովքեր այսօր բարձրաստիճան զինվորականներ են: Նաեւ այդ պատճառով է, որ Արցախյան ազատամարտի մասնակիցների դիրքորոշումը շարունակում է կարեւոր հանգամանք մնալ այնտեղ (նաեւ այնպիսի հարցերում, ինչպիսին ընտրություններն են): Բարձրաստիճան սպաները (Տեղ գյուղից), ում հետ առիթ ունեցանք հանդիպել նախընտրական օրերին, հստակ չէին արտահայտվում թեկնածուներից որեւէ մեկի օգտին: Նրանք մի խնդիր էին դրել իրենց առջեւ՝ թույլ չտալ, որ կողմերի միջեւ բախում տեղի ունենա, որ գյուղում առկա լարվածությունն ավելի սաստկանա, նպաստել, որ ընտրություններն անցնեն ազատ ու արդար: Գնդապետ Մելիքսեթ Պողոսյանն ավելորդ համարեց այդ մտահոգությունը. **«Ամբողջ կյանքում պայքարել եմ մեր պետականության կայացման համար, ինչպե՞ս կարող եմ թույլ տալ որեւէ ավելորդ արարք»:** Գրեթե նույն դիրքորոշումն արտահայտեցին թեկնածուներ Սաղաթել Գալստյանն ու Մարտուն Պողոսյանը: Իսկ լարվածություն, այնուամենայնիվ, գյուղում կար: Թեկնածուների թիմերը միմյանց հանդեպ լուրջ դժգոհություններ ունեին (նրանց փաստարկներին չենք անդրադառնում՝ խուսափելով նոր լարվածություն հրահրելուց): Կրակի վրա յուղ էր լցրել մայրաքաղաքային թերթերից մեկի հրապարակումը՝ իբր գյուղից ստացված մի դիմումի հիման վրա, ըստ որի՝ **«ճանապարհային ոստիկանության հրամանատարն ահաբեկում է իրենց եւ ստիպում ընտրել իր հորեղբորը՝ Սաղաթել Գալստյանին»:** Վերջինս դա համարեց զրպարտություն եւ մասնավորապես ասաց. **«Մենք էլ կարող ենք մամուլի միջոցով խոսք ասել, մանավանդ որ ասելիք շատ ունենք, բայց ես կողմնակից չեմ պայքարի նման մեթոդին»:** Մրցակից թիմը, ինչպես ասաց Մարտուն Պողոսյանը, տեղյակ չէ այդ դիմումին:

Արցախյան ազատամարտի եւ հատկապես զինվորականության վերաբերմունքի հարցը (թեեւ նրանք, ինչպես նշեցինք, չեզոքություն էին խոստանում) մինչեւ վերջ շարունակում էր մնալ օրակարգում: Սեպտեմբերի 7-ին, երբ մեր թերթի ստեղծագործական խումբը Տեղում էր, խոսակցություններ լսեցինք, թե իբր ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Յուրի Խաչատուրովը (ով քավորություն է անում Մելիքսեթ Պողոսյանի ընտանիքի հետ) տեղցի զինվորականներին արձակուրդ է տվել եւ հրահանգել սատարել «կոմանդիրի» եղբորը: Եվ իբր այդ տեղեկատվությունը նույն օրը փոխանցվել է ՀՀ պաշտպանության նախարարին, ով էլ չեղյալ է հայտարարել գլխավոր շտաբի պետի հրահանգն ու կոչ արել զսպվածության, չմիջամտության:

Ստեղծված իրավիճակում բոլորին հետաքրքրում էր, թե ինչ դիրքորոշում ունեն Սյունիքի մարզպետն ու ՀՀԿ-ն առհասարակ. չէ՞ որ երկու թեկնածուն էլ ՀՀԿ-ական են: Բայց եւ մարզպետը, եւ ՀՀԿ շրջանային խորհուրդը թեկնածուներից որեւէ մեկին սատարելու վերաբերյալ պաշտոնական հայտարարություն չէին արել: Մարտուն Պողոսյանը, մինչդեռ, մի դիտարկում արեց, որով, կարծեք, պարզություն մտցրեց այդ հարցում. **«Գյուղի երկու դպրոցի տնօրեններն էլ բացահայտ աշխատում են հօգուտ Սաղաթել Գալստյանի, ինչը հնարավոր չէ առանց մարզպետարանի համաձայնության»:** Սաղաթել Գալստյանը դպրոցների տնօրենների պահվածքում տարօրինակ ոչինչ չէր տեսնում. **«Չորս տարի միասին ենք աշխատել, միշտ ձգտել եմ նրանց օգտակար լինել, ինչո՞ւ չպետք է ինձ սատարեն»:**

Մարտուն Պողոսյանի թիմում ոչ սովորական համարեցին իրողությունը, որ գյուղի տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Անահիտ Սեւումյանը Սաղաթել Գալստյանի եղբոր կինն է: Անահիտ Սեւումյանն իր հերթին անհիմն համարեց այդ հանգամանքի շահարկումը. **«Այո՛, ե՛ւ ես, ե՛ւ ամուսինս, բնականաբար, քվեարկելու ենք Սաղաթել Գալստյանի օգտին, բայց դա որեւէ կապ չունի իմ՝ որպես հանձնաժողովի նախագահի, գործունեության հետ: Ես հանձնաժողովի նախագահի արտոնագիր ստացել եմ այն ժամանակ, երբ դեռ Սաղաթելը գյուղապետ էր: Իմ պահվածքում որեւէ կողմնակալություն, սուբյեկտիվիզմ թույլ չեմ տվել եւ թույլ չեմ տա, ընտրությունները գյուղում կանցնեն օրենքի տառին համապատասխան, ես դա խոստանում եմ»:**

Գյուղական համայնքներում ընտրությունների ժամանակ սովորաբար չեն կարեւորվում գյուղապետի աթոռի հավակնորդների ծրագրերը, նրանց գաղափարական, ինտելեկտուալ մակարդակը, հաջողություններն ու ձախողումները: Կարեւորը, նախեւառաջ, ազգակցական, բարեկամական կապերն են, կարեւորը մարդկանց համընկնող շահերն են: Այդ առումով բացառություն չէր կարող լինել նաեւ Տեղը: Այդուհանդերձ ավելորդ չենք համարում անդրադառնալ թեկնածուների կենսագրությանն ու նրանց նախընտրական խոհերին՝ համառոտ:

Մարտուն Պողոսյան. ծնվել է 1956թ. Տեղ գյուղում: 1973-76թթ.սովորել է Գորիսի գյուղտեխնիկումում: 1976-78թթ. ծառայել է խորհրդային բանակում: Հետագայում մասնակցել է Արցախյան ազատամարտին: 1997-ին վերապատրաստվել է սպայական դպրոցում: 1998-2000թթ. եղել է Կուբաթլիի շրջանի գումարտակի հրամանատարը: 2000-2003թթ. եղել է Սիսիանի տանկային զորամասի հրամանատարը, որից հետո զբաղվել է ձեռնարկատիրական գործունեությամբ: Թերթերից մեկին տված հարցազրույցում Մարտուն Պողոսյանն այսպես է ներկայացրել իր արածն ու անելիքը. **«Հաջողության հասնելու եւ հարգանք վայելելու միակ գրավականն ազնվությունն է, անկեղծությունը եւ աշխատասիրությունը: Իմ ամբողջ գիտակցական կյանքում ապրել եւ արարել եմ այս սկզբունքով... Այսօր գյուղը բազմաթիվ օբյեկտիվ եւ սուբյեկտիվ պատճառներով պառակտվել է, չկա երբեմնի միասնությունը: Կար ժամանակ, երբ համայնքը մի մեծ ընտանիք էր: Ես առաջադրեցի թեկնածությունս, որովհետեւ զգում եմ, որ կարող եմ համախմբել, մեկտեղել համագյուղացիներիս ուժերը՝ հանուն գյուղի հետագա զարգացման: Անհրաժեշտ է գյուղում վերականգնել բարոյահոգեբանական մթնոլորտը, հավատը իշխանությունների հանդեպ, պետք է բարձրացնել գյուղապետարանի վարկը: Այսօր մեր հողերի 30%-ն ուրիշներն են մշակում»:**

Սաղաթել Գալստյան, ծնվել է 1945թ. Տեղ գյուղում: 1965-69թթ. սովորել է Երեւանի անասնաբուժական-անասնաբուծական ինստիտուտում, որից հետո մինչեւ 1986թ. աշխատել է Տեղի տնտեսությունում՝ գլխավոր զոոտեխնիկ, այնուհետեւ՝ տնտեսագետ: 1989-91թթ. Գորիսի տրիկոտաժի արտադրական միավորման Տեղի մասնաճյուղի պետն էր: 1991-92թթ. Տեղի կոլեկտիվ տնտեսության ղեկավարն էր: 1992-98թթ. «Հայփոստի» Տեղի բաժանմունքի ղեկավարն էր: 2008 թվականից Տեղի համայնքի ղեկավարն է: Սաղաթել Գալստյանը 2008-2012 թվականներն արդյունավետ աշխատանքի տարիներ է համարում գյուղի համար: Համայնքում, նրա պնդմամբ, քիչ աշխատանքներ չեն կատարվել այդ ընթացքում, եւ ինքն իր մեջ ուժ է տեսնում՝ եւս մեկ ընտրաշրջան ղեկավարելու Տեղ գյուղը:

Ի դեպ, Պողոսյաններն ու Գալստյանները բարեկամներ են. այդ մասին մեզ ասաց Անահիտ Սեւումյանը: Եվ, ըստ նրա, ոչ ոք չէր սպասում, որ բարեկամ գերդաստանները դուրս կգան միմյանց դեմ, որ նրանց պատճառով գյուղը կբաժանվի երկու մասի: 2008թ. ընտրությունների ժամանակ Պողոսյանների գերդաստանը պայքարում էր Սաղաթել Գալստյանի հաղթանակի համար: Ըստ Մարտուն Պողոսյանի՝ այս անգամ՝ թեկնածուների առաջադրումից առաջ եւ հետո, բանակցություններ են տեղի ունեցել երկու գերդաստանի միջեւ՝ մեկ թեկնածուով ընտրություններին մասնակցելու համար: Եվ Սաղաթել Գալստյանն իբր խոստացել է, իր տարիքը հաշվի առնելով, ճանապարհը զիջել Մարտուն Պողոսյանին, բայց հետո, ինչ-ինչ ուժերի մղումով, որոշել է պայքարել մինչեւ վերջ… Մեր համոզմամբ, սակայն, Տեղ գյուղում դժվար թե միասնական թեկնածու լիներ, եթե անգամ Պողոսյաններն ու Գալստյանները հանդես գային համատեղ: Իրավիճակի պատճառները հասկանալու համար պետք է խորանալ գյուղի վերջին տարիների անցուդարձի մեջ, ինչը խոսակցության այլ նյութ է: Բնակչության ակնհայտ պառակտվածությունը (ի դեպ, դա միայն Տեղ գյուղին բնորոշ երեւույթ չէ, դա սյունիքյան համայնքների մեծ մասի՝ առայժմ անբուժելի հիվանդությունն է) ցայտուն դրսեւորում ունեցավ 2012թ. մայիսի 6-ի ընտրությունների ժամանակ, ինչին անդրադարձել ենք մեր թերթի ս.թ. հունիսի 30-ի համարում: Այդ հրապարակման մեջ արձանագրել էինք, որ Տեղ գյուղում (առանց զինվորականների) համամասնական ընտրության մասնակիցների 47.3%-ը քվեարկել է ՀՀԿ-ի, 33.4%ը՝ ԲՀԿ-ի օգտին, ինչն առնվազն նշանակում է , որ Տեղ գյուղում այնքան էլ ոգեւորված չեն Հանրապետականով, որի առաջնորդը համագյուղացի Սերժ Սարգսյանն է: Անկեղծ այս դիտարկումը որոշ մարդիկ չարությամբ ընդունեցին: Գ.Խաչենց անուն-ազգանունով մեկը (ըստ ծրարի՝ Երեւան, Կոմիտաս 19 հասցեում բնակվող) երեւանաբնակ ու գորիսաբնակ տեղցիների անունից արձագանքեց մեր դիտարկմանը՝ ներկայացնելով որեւէ միտք չարտահայտող, բուն թեման շրջանցող բառերի մի կույտ: Հիմա, օգտվելով առիթից, խոսք ենք ուղղում նրան. ա՜յ Գ.Խաչենց, մենք ասում ենք ՀՀԿ-ն Տեղ գյուղում այսքան ձայն է հավաքել, ԲՀԿ-ն՝ այսքան, Դուք ասում եք. «Անձնական շահ կոչնակող զանգ չի կարելի հնչեցնել»: Մենք ասում ենք՝ Աժ ընտրությունները ցույց տվեցին, որ Տեղ գյուղում այնքան էլ հիացած չեն ՀՀԿ-ով, Դուք ասում եք. «Դա գուշակություն է»: Մենք ասում ենք. մի օգտագործեք Տեղ գյուղացի լինելու հանգամանքը եւ դատավորի դեր մի ստանձնեք ու մի ասեք, թե ով ինչպես իրեն պահեց ընտրությունների ժամանակ, Դուք նորից փորձում եք դատավորի դեր խաղալ: Ա՜յ Գ.Խաչենց, հիմա էլ ասում ենք՝ Տեղ գյուղում ՀՀԿ չկա, այլապես այդ կուսակցությունից գյուղապետի համար երկու թեկնածու չէր առաջադրվի: Գոնե այս անգամ՝ մեր դիտարկումին արձագանքելիս, կգրեք հասկանալի հայերենով, խնդրում ենք:

…Վերադառնանք սեպտեմբերի 9-ի ընտրություններին: Օրն իսկապես խաղաղ ընթացք ունեցավ Տեղում՝ չհաշված մանր-մունր մի քանի վիճաբանություն: Ոստիկանությունն էլ, ըստ երեւույթին, առանձնահատուկ ուշադրություն էր դարձրել այդ համայնքին:

1545 ընտրողից քվեարկությանը մասնակցեց 1343 հոգի: Վավեր ձայներից 684-ը Սաղաթել Գալստյանի օգտին էր, 601-ը՝ Մարտուն Պողոսյանի օգտին:

Սեպտեմբերի 9-ը պատմություն դարձավ: Տեղ գյուղում, սակայն, դեռ երկար կհիշվի այդ օրը: Համայնքի ղեկավարի ընտրության արդյունքն էլ, կարելի է ասել, վավերացրեց ուժերի նոր հարաբերակցությունն այդ գյուղում: Տեղի գյուղապետի ընտրության արդյունքը որոշակի անդրադարձ կունենա (եւ արդեն ունենում է) գորիսյան իրականության, ուժերի գորիսյան դասավորության վրա նույնպես: Ինչ վերաբերում է գնդապետ Մելիքսեթ Պողոսյանին… Նա պետք է ի սկզբանե տեսներ, որ Տեղի ընտրախաղը (վերջին հաշվով) խնամքով պատրաստված որոգայթ է իր համար: Մելիքսեթ Պողոսյանը՝ Արցախյան ազատամարտի փառապանծ հրամանատարներից մեկը, դեմ ընկավ այն պատին, որը Գորիսում ու Տեղում կառուցվել էր նաեւ իր ակտիվ ջանքով… Իսկ Մարտուն Պողոսյանի եւ Սաղաթել Գալստյանի մրցակցության խնդիր առհասարակ չկար: Ի վերջո Տեղի ներկայի ու ապագայի համար ամենեւին էլ կարեւոր չէ (ինչպես եւ մյուս գյուղերում ու քաղաքներում), թե ով կլինի համայնքի ղեկավարը:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Սյունյաց երկիր
www.syuniacyerkir.am

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի Ց ■ ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ

ՇԱԲԱԹ • 15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2012Թ • № 24 (265)

Այգեձոր բանավանը, որի հարեւանությամբ կիրականացվի հանքավայրի բաց արդյունահանում:

Լեհվազի բնակչությունն անկարելի է համարում Այգեձորի հանքավայրի բաց արդյունահանումը

ՀՈՇՈՏՎՈՂ ՄԵՂՐԻ

1960-70-ական թվականներին կառուցված Այգեձոր բանավանը Վարդանիձորի համայնքի մեջ է մտնում: Բանավանը Մեղրու շրջանում ժամանակին իրականացվող երկրաբանական աշխատանքներում ընդգրկված մարդկանց բնակատեղին էր: Խորհրդային էպոխայի վերջին շրջանում այն, կարծեք, ավարտել էր իր առաքելությունը եւ դարձել փոքրիկ մի բնակավայր: Բայց նրա մերձակայքում երեւակված պղինձ-մոլիբդենային հանքավայրը պատճառ դարձավ, որ Այգեձորը հետագայում նույնպես գտնվի երկրի ընդերքի վրա աչք ունեցողների ուշադրության կենտրոնում: Եվ, ըստ Վարդանիձորի գյուղապետ Ալբերտ Բեկլարյանի, 2005թ. հանքավայրի տարածքը (18հա) վարձակալության տրվեց «Ակտիվ լեռնագործ» ՍՊ ընկերությանը՝ տարեկան 180 հազար դրամ վարձավճարով: Վերջերս ավարտվել են հետախուզական-որոնողական աշխատանքները, եւ (դարձյալ գյուղապետի հավաստմամբ) շուտով կսկսվի հանքավայրի բաց արդյունահանումը: Այդ կապակցությամբ օգոստոսի 22-ին Վարդանիձորում կազմակերպվեց հանրային լսում՝ 20 հոգու մասնակցությամբ: Հանրային լսումին (եթե կարելի է տեղի ունեցած միջոցառումն այդպես անվանել) մասնակցել են նաեւ «Ակտիվ լեռնագործ» ՍՊԸ-ի գլխավոր բաժնետեր Գրիշա Գյուրջյանը, ՀՀ բնապահպանության նախարարության ներկայացուցիչ Կարինե Մովսիսյանը (գյուղապետի հավաստմամբ) եւ Հովիկ Նիկողոսյանը՝ հանքավայրի շահագործման նախագծի հեղինակը:

Այգեձորի հանքավայրի բաց արդյունահանման հեռանկարը տարբեր արձագանքների տեղիք է տվել Վարդանիձորում, Լեհվազում եւ Մեղրիում: Վարդանիձորցիների դիրքորոշումը մեզ փոխանցեց գյուղապետ Ալբերտ Բեկլարյանը. **«Հանքավայրը կշահագործվի 25 տարի՝ մինչեւ 2036 թվականը, այդ ընթացքում մշտական աշխատանքով կապահովվի մոտ 100 մարդ: Հանքավայրի շահագործումը բնապահպանական առումով մեզ չի անհանգստացնում, քանի որ հանքավայրին կից հարստացուցիչ ֆաբրիկա եւ թափուկավայր չի կառուցվելու: Հանքաքարը, առանց ջարդելու, կտեղափոխվի (Մեղրու Փոքր թաղով) Ագարակի կոմբինատ. մոտ 20կմ ճանապարհ է: Այնպես որ Վարդանիձորում, Այգեձորում, Թխկուտում անհանգստություն չկա, ընդհակառակը՝ մարդիկ ոգեւորված են, սպասում են, որ մի քանի տարի հիմնական աշխատանք կունենան»:**

Վարդանիձորի գյուղապետ Ալբերտ Բեկլարյանը եւ Լեհվազի գյուղապետ Սասուն Զաքարյանը:

Միանգամայն հակառակ դիրքորոշում ունեն Լեհվազի բնակիչները: Ըստ համայնքի ղեկավար Սասուն Զաքարյանի՝ **«Այգեձորի հանքավայրի բաց արդյունահանումը շատ վատ ազդեցություն է ունենալու Լեհվազի վրա: Օդային ավազանն է կեղտոտվելու, եւ նոր հիվանդությունների ենք բախվելու: Հանքավայրը մեզանից մոտ 4կմ հեռավորության վրա է: Հանքավայրի բաց արդյունահանումն անթույլատրելի եմ համարում. այդպես են կարծում բոլոր լեհվազցիները: Պատկերացնո՞ւմ եք, թե ինչ կլինի պայթեցումների ժամանակ, երբ քամի բարձրանա, իսկ այդ հատվածում քամին անպակաս է: Ես ծանոթ չեմ հանրային լսումների մասին օրենսդրությանը, բայց... Գալիս են Վարդանիձորում լսում կազմակերպում եւ Լեհվազի բնակիչներին մասնակից չեն դարձնում: Հավատա՞նք այդ լսում կոչված միջոցառման անկեղծությանը, երբ ամենամեծ ազդակիր համայնքի բնակչության կարծիքն անտեսում են»:**

Սեպտեմբերի 6-ին խնդրո առարկայի շուրջ հարցախույզ անցկացրինք Մեղրի քաղաքում: Ինչպես եւ սպասվում էր, մեղրեցիները միաբերան դեմ արտահայտվեցին Այգեձորի հանքավայրի բաց արդյունահանմանը: Քաղաքից 8-9կմ հեռավորության վրա գտնվող հանքավայրի բաց արդյունահանումը նոր եւ ծանր հարված կլինի քաղաքի բնակչությանը: Մեղրիում էլ, ինչպես եւ Լեհվազում, զարմացած են՝ ինչո՞ւ հանրային լսում կոչված միջոցառումը կազմակերպում են միայն Վարդանիձորում, իսկ ազդակիր մյուս համայնքներում՝ ոչ: Առհասարակ մեղրեցիները զարմանալու շատ պատճառներ ունեն՝ Մեղրի գետի հարց են քննարկում՝ մեղրեցիների կարծիքը չեն հարցնում, Զվարն են պղծում՝ մեղրեցիների կարծիքը հաշվի չեն առնում, Այգեձորում հանքավայրի բաց արդյունահանում են ձեռնարկում՝ մեղրեցիների կարծիքը չեն հարցնում, Լիճքվազ-Թեյի վերագործարկումն են ձեռնարկում (այս անգամ՝ «Սագամար» ՍՊԸ-ի միջոցով)՝ մեղրեցիներին չեն հարցնում եւ չեն էլ ասում՝ որտե՞ղ է լինելու պոչամբարը...

Ի տարբերություն Մեղրուն առնչվող մյուս հրապարակումների (ընդերքի շահագործմանը վերաբերող)՝ այսօր չենք ուզում հիմնավորել, ապացուցել, որ բաց արդյունահանմամբ նոր հանքավայրի (Այգեձորի) գործարկումը հերթական եւ լրջագույն հարվածն է լինելու Մեղրի քաղաքին, Լեհվազին, Վարդանիձորին, Թխկուտին, Այգեձորին: Դա ակնհայտ է: Այսօր ընդամենը մեկ հարց ենք ուղղում ողջամիտ մեղրեցիներին՝ իսկ ո՞վ է Մեղրու շահերը ներկայացնում-պաշտպանում ՀՀ կառավարությունում. չէ՞ որ այնտեղ (բազմաթիվ օրինակներ ունենք արդեն) չեն պատկերացնում Մեղրու խնդիրը: Եթե կա նման գոյություն, ապա շատ կուզենայինք հրապարակավ մի քանի հարց ուղղել նրան: Իսկ եթե չկա այդ մեկը, ապա Մեղրին ընդամենը մեկ խնդիր ունի՝ արթնանալ, եթե, իհարկե, այլեւս եւ ընդմիշտ ուշ չէ...

ԱՂԱՎՆԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

ՌԱՖԻԿ ԱԹԱՅԱՆ.

«Ո՞վ է Մաքսիմը, ի՞նչ կապ ունի նա մեր գյուղի հետ»

ՃԱԿԱՏԱՄԱՐՏ ՔԱՋԱՐԱՆ ԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՐ

ՀՀ կառավարության 2011թ. ապրիլի 28-ի N627-Ն որոշման համաձայն, Սյունիքի մարզի 6 համայնքի (Քաջարան, Չափնի, Սեւաքար, Սյունիք, Արծվանիկ, Աճանան) գյուղատնտեսական նշանակության որոշ հողատարածքներ, ինչպես գրվել է քանիցս, համարվեցին բացառիկ գերակա հանրային շահ եւ հողերի նպատակային նշանակությունը փոխելուց հետո պետք է հանձնվեին «ԶՊՄԿ» ՓԲԸ-ին: Քաջարան գյուղի տարածքից գերակա հանրային շահ ճանաչվեց 181.7 հա հողատարածք: Կառավարության այս չարաբաստիկ որոշումից հետո անցել է արդեն մեկ տարուց ավելի ժամանակ: Ընթացքում շատ ջրեր են հոսել: Շատերն են եկել Քաջարան գյուղ եւ տեղում ծանոթացել բնակչության տեսակետին, բազմաթիվ հայտարարություններ են տարածվել, նամակներ են գրվել թե՛ գյուղի բնակիչների ու գյուղապետ Ռաֆիկ Աթայանի, թե՛ խնդրո առարկայով մտահոգ հասարակական կազմակերպությունների, լրատվամիջոցների, բնապահպան-ակտիվիստների եւ անհատների կողմից: Սակայն, ի վերջո, մինչ օրս չեղյալ չի հայտարարվել կառավարության N627-Ն որոշումը կամ հակառակը՝ մինչ օրս գերակա հանրային շահ ճանաչված հողերը չեն հանձնվել ԶՊՄԿ-ին: Աժ ընտրությունների նախապատրաստման շրջանում այդ խնդրի շուրջ խոսակցությունները դադարեցին: Եվ միայն վերջերս հարցը կրկին մտահոգության առարկա է դարձել:

Ըստ Կապանում շրջանառվող խոսակցությունների՝ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ տնօրեն Մաքսիմ Հակոբյանը գնել է Կապանի մսի կոմբինատի տարածքը եւ տեղում բնակելի տներ է ուզում կառուցել՝ Քաջարան գյուղի բնակիչներին այնտեղ բնակեցնելու հեռահար նպատակով: Այդ խոսակցության հավաստիությունը պարզելու եւ Քաջարան գյուղի ու գյուղապետի արձագանքը Կապանում շրջանառվող հիշյալ խոսակցությունների մասին իմանալու նպատակով զրուցեցինք Քաջարանի գյուղապետ Ռաֆիկ Աթայանի հետ, ով մասնավորապես ասաց. «Ինձ ընդհանրապես հետաքրքիր չէ, թե Մաքսիմը Հակոբյանն ինչ է արել կամ ինչ է գնել: Կամ՝ մեզ հարցրե՞լ են՝ ուզո՞ւմ ենք տեղափոխվել, չե՞նք ուզում: Մաքսիմն ո՞վ է, մեր գյուղի հետ ի՞նչ կապ ունի, ինքը երբեք չի եկել մեր գյուղ, բնակիչների հետ չի զրուցել: Եթե նույնիսկ կառուցվելիք տները քաջարանցիների համար են նախատեսվում, ապա նրանք այդ տներում ի՞նչ են անելու, ո՞նց են պահելու իրենց ընտանիքները: Մենք տուն ունենք, մեզ տուն պետք չէ: Եթե աշխատանք էլ տան, չենք համաձայնի տեղափոխվել գյուղից: Քաջարանցիներն ապրում, աշխատում են իրենց հարազատ գյուղում, հող են մշակում, խոտ են հնձում: Գյուղում այսօր հազարից ավելի գերեզման կա: Մենք թույլ չենք տա, որ մեր գյուղի տարածքում հանք շահագործվի, նրանք ոչինչ էլ չեն անելու, չեն կարող: Այս ամենը աբսուրդ է, Մաքսիմը եւ իր եղբայրները թալանչիներ են, ովքեր անընդհատ ու անընդմեջ թալանում են մեր ժողովրդի ունեցվածքը»:

Ահա թե ինչպես արձագանքեց Քաջարանի գյուղապետն իրենց գյուղացիներին Կապանի մսի կոմբինատի տարածքում վերաբնակեցնելու մասին խոսակցություններին: Նա նաեւ ասաց, որ գյուղացիներն այժմ մեկուսացած են ապրում, զբաղվում են հիմնականում խոտհարքով, եւ քանի որ ԶՊՄԿ ղեկավարության կողմից արգելված է կոմբինատի բեռնատարներին մտնել գյուղի տարածք, խոտը գյուղ տեղափոխելու հետ կապված դժվարություններ կան: **«Գյուղում միակ բեռնատարն իմն է, բոլորի խոտը սարից ես եմ բերում»,** – ասաց Ռաֆիկ Աթայանը:

Հիշեցնենք, որ սեպտեմբերի 9-ին կայացած ՏԻՄ ընտրություններում Ռաֆիկ Աթայանը գյուղապետի միակ թեկնածուն էր եւ կրկին դարձավ համայնքի ղեկավար: Ընտրության 133 մասնակցից 125-ը քվեարկել էր նրա օգտին (անվավեր քվեաթերթիկների թիվը՝ 5, դեմ՝ 3):

ԱՂԱՎՆԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

ՀՈԲԵԼՅԱՆ

Լեհվազի միջնակարգ դպրոցը 90 տարեկան է

ՎԱՐՍԵՆԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Լեհվազի միջն. դպրոցի տնօրեն

Սյունյաց գողտրիկ աշխարհի գեղատեսիլ հովիտներից մեկում է ծվարած Լեհվազի միջնակարգ դպրոցը:

1922 թվականը հիշարժան է Լեհվազ համայնքի համար նրանով, որ այդ տարում իր մեկնարկը սկսեց գյուղի առաջին աստիճանի դպրոցը, եւ հյուսվեց մի կրթօջախի պատմություն: Պատմություն մի անխոնջ տքնանքի, հույսի ու հուսալքության, լույսի ու հաղթանակների մասին: Պատմությունն այս հյուսվեց տարիներ ի վեր, հյուսվեց դանդաղ, հազարավոր սրտերի բաբախների ներքո, հարյուրավոր ուսուցիչների անմնացորդ նվիրումի շնորհիվ:

90-ամյա տարեգրության ամեն մի օրն այստեղ արարող մանկավարժներիս կենսագրությունն է եւ մեր կյանքի մի մասնիկը: Յուրաքանչյուր տարի դպրոցի հիմնադրման օրը՝ մայիսի 19-ին, հեքիաթի հրաշք ոգին թեւածում է դպրոցի կամարների ներքո: Ահա այստեղ է, որ փոքրիկ լեհվազեցին սերտում է 1600-ամյա մեր փառավոր այբուբենը, զինվորագրվում հայոց գրերին եւ երդվում արժանավոր սան լինել դպրոցին, սերնդեսերունդ փոխանցել մեր լեզուն ու հավատքը: Կրթական մյուս աստիճաններում գնահատում է հայոց անմահ, մշտապես խնկարկումի արժանի մեծերին, հաղորդակցվում համաշխարհային գրականության գոհարներին եւ, ի վերջո, ստանում իր մարդկային հոգեկերտվածքը՝ արժեւորելով առաքինությունն ու բարությունը, հայրենասիրությունն ու գթասրտությունը: Երբ 1988-1989թթ. սկսվեց Ղարաբաղյան շարժումը, երբ սասանվեց հայոց տան անդորրը, երբ դեռ մորմոքվում էինք երկրաշարժի վերքերից, Լեհվազը վերաբնակեցվեց փախստական հայրենակիցներով: Այդ ծանր ժամանակներում օդի ու ջրի պես առաջնային էր հայկական դպրոցի վերաբացումը: Եվ այդ պատասխանատու աշխատանքը հանձն առավ Բաքվից գաղթած Վարդան Պետրոսյանը: Այժմ, երբ տարիների հեռվից նայում ենք անցած ուղուն, հպարտությամբ ենք հիշում, թե անկախ ցածր աշխատավարձից եւ պետության համար անցումային շրջանի մյուս դժվարություններից, ինչ նվիրումով էինք աշխատում, սովորեցնում հայ մանուկին մեր քաղցրաբառ հայրենը: 2006 թվականից դպրոցի ղեկավարությունը ստանձնեց բազմամյա մանկավարժական աշխատանքային բովում թրծված, արարող եւ ստեղծող մի անձնավորություն՝ Ժորա Միրզոյանը: Նրա ջանքերի շնորհիվ դպրոցի շենքը վերանորոգվեց, կահավորվեց եւ դարձավ ուսումնական հաճելի ու հարմարավետ կրթօջախ: Ժորա Միրզոյանի նախաձեռնությամբ դպրոցում ձեւավորվեցին բազմաթիվ ավանդույթներ՝ առավոտյան լիցքային վարժությունները, առարկայական շաբաթներն ու տասնօրյակները, տոնական բազմաբնույթ միջոցառումները, հայրենի եւ օտար լեզուներով տիկնիկային ներկայացումները, բանավեճերը, սպորտլանդիաները, հայրենագիտական արշավները…

Շուրջ չորս տարի է՝ դպրոցը հյուրընկալում է Ամերիկյան խաղաղության կորպուսի կամավորներին՝ Դանյա Օգասթասին եւ Թոմաս Սիրզին: Համատեղ աշխատանքի շնորհիվ դպրոցի սովորողները բազմաթիվ հաջողություններ են ունեցել հանրապետական մրցույթներում, առարկայական օլիմպիադաներում:

Ամեն տարի պետական բուհեր են ընդունվում դպրոցի լավագույն շրջանավարտները, որոնցից երկուսը՝ Մկրտչյան Թագուհին եւ Մարտիրոսյան Լիլիթը, գերազանց ավարտելով բուհը, վերադարձել են հարազատ դպրոց ու իրենց մանկավարժական առաջին քայլերն են անում: Այսօր հպարտությամբ արձանագրում ենք, որ զուր չեն եղել մեր ջանքերն օրինակելի եւ կայացած դպրոց ունենալու գործում:

Շնորհակալ ենք կառավարությանը՝ մեր աշխատանքն ըստ արժանվույն գնահատելու համար:

Թող հարատեւի տարեգրությունդ, սիրելի դպրոց, եւ քո գիտելիքների լույսը փարոս դառնա կյանք մտնող բազում սերունդների համար: ■

Հեփաղարձ հայացք դպրոցի անցած ուղուն

Մեր դպրոցը 90 տարեկան է, բայց դա չի նշանակում, որ գյուղի բնակիչները տառաճանաչ են դարձել միայն 1922 թվականից, երբ հիմնվել է դպրոցը: Լինելով Մեղրու ամենամոտ հարեւանը, Լեհվազը շատ թելերով կապված է եղել նրա հետ, իսկ գրաճանաչությունը Մեղրիում սկսվել է շատ վաղուց: Վկայություններ կան, որ Մեսրոպ Մաշտոցն իր առաքելությունը Գողթն գավառում ավարտելուց հետո Սյունյաց եւ Արցախ աշխարհ է անցել Արեւիք գավառով:

Մեղրիում գրաճանաչությունն ակտիվացում է ապրում 19-րդ դարի կեսերից, երբ Արեւելյան Հայաստանն անցնում է Ռուսաստանի տիրապետության տակ: Ցարի կարգադրությամբ հայաբնակ վայրերում թույլատրվում է եկեղեցիներին կից հիմնել ծխական դպրոցներ: Մինչ այդ էլ նշանավոր անձինք երեխաներին գրաճանաչություն էին սովորեցնում տնային պայմաններում: 1850-60-ական թվականներին Մեղրիում երեխաներին գրաճանաչություն էին սովորեցնում Մկրտիչ Աղավելյանը, Պապի եւ Աստվածատուր Իսրայելյանները, Մահտեսի Դավիթը, ագուլիսեցի Գարեգին վարժապետը, Հովհաննես սարկավագ Վաղարշապատցին: 1869թ. ագուլիսեցի Սարգիս Մակարյանցը գալիս է Մեղրի եւ գործող եկեղեցու գավթում կազմակերպում 10 տարեկան երեխաների ուսուցում: Նա ուսուցանում էր տառաճանաչություն, հայոց պատմություն, կրոն, ռուսաց լեզու, երգեցողություն: Մակարյանցին փոխարինել է Ագուլիսի ուսումնարանի շրջանավարտ, Կարճեւան գյուղի բնակիչ Խաչատուր տեր Աբրահամյանը, ապա՝ հայտնի մանկավարժ Ալեքսանդր Աղաբաբյանը: Հետագայում գրաճանաչություն սովորեցնելու նպատակով ուսուցում է կազմակերպվում գյուղի երեք թաղի մասնավոր տներում՝ Մաթեւոս Շահյանի, Ա.Վաչյանի եւ Պետրոսյանցի կողմից: 1881թ. հունվարին մեղրեցիները հանգանակության կոչով ժողովում են որոշակի գումար եւ դիմում Ամենայն հայոց կաթողիկոսին՝ թույլատրելու Մեղրիում կառուցել ծխական դպրոցի շենք: Ստացվում է թույլտվությունը: 1882թ. դեկտեմբերի 23-ին տեղի է ունենում դպրոցի պաշտոնական բացումը, որը հնարավորություն է տալիս միավորել տնային պայմաններում սովորող երեք խմբի երեխաներին: Ամենայն հայոց կաթողիկոս Գեւորգ 4-րդը հատուկ կոնդակով շնորհավորում է երկդասյա դպրոցի բացումը: Նորաբաց դպրոց առաջին անգամ ոտք է դնում 53 երեխա: Անկասկած՝ նրանց մեջ կային նաեւ լեհվազեցիներ: 1891-92 ուսումնական տարում Երեւանի թեմի տեսուչի կողմից ստացվում է թույլտվություն՝ ծխական դպրոցին կից օրիորդաց բաժանմունք բացելու համար: Ուսուցչուհի է նշանակվում Շուշանիկ Դանիելյանը, ով կրթությունը ստացել էր Ագուլիսի երկսեռ դպրոցում: 1896թ. դպրոցն ուներ 4 ուսուցիչ, 110 աշակերտ, որից 20-ը՝ աղջիկ: Մեղրու դպրոցի մանկավարժական խորհրդի 1909թ. սեպտեմբերի արձանագրության մեջ դասավանդող ուսուցիչների թվում նշվում է մաթեմատիկայի ուսուցիչ Ղեւոնդ Մեժլումյանի անունը, ով ավարտել էր Գերմանիայի կայսերական ակադեմիան, իսկ երգեցողության ուսուցչուհի՝ Թիֆլիսի երաժշտական ուսումնարանը: Նույն Մեժլումյանի ջանքով Մեղրու սպառողական կոոպերատիվում հիմնվում է բոժոժից թել քաշելու գործարան: Ուշադրությունը, հոգածությունը կրթության նկատմամբ մեղրեցիներին բերեցին լայն ճանաչում: Մարիետա Շահինյանը գրում է. «Հայերը սովորություն ունեն պարծենալու իրենց հեռավոր եւ փոքրիկ Մեղրի գավառով: Նույնիսկ նրանք, ովքեր իրենց աչքով չեն տեսել Մեղրին, անպայման ուրախ դեմք կընդունեն. - Մեղրի՞ն: Հիանալի շրջան է, կուլտուրական շրջան»: Ո՞րն է մեղրեցիների կուլտուրականության չափանիշը: Ոչ քաղաքում եւ ոչ էլ գյուղերում այն ժամանակ գրեթե անգրագետներ չկային: (Խնդրում եմ նկատի ունենալ՝ խոսքը 100 տարի առաջվա մասին է): Ըստ մեկ այլ աղբյուրի՝ կենտրոնից ավելի շատ թերթեր էին դուրս գրում մեղրեցիները, քան, կարծեմ, նույնիսկ երեւանցիները: Մեղրին Մոսկվայից դուրս է գրել 9 նմուշ սովետական նոր հանրագիտարան, երկու նմուշ հատուկ մանկավարժական հանրագիտարան: Դրա շնորհիվ մի քանի ուսուցիչներ, հասարակական ակտիվիստներ ժողովրդին տվել են՝ ինչ կարողացել են եւ ամենագլխավորը՝ գրագիտություն, գրագիտություն եւ մեկ անգամ էլ գրագիտություն: Եվ գրագիտության հետ մեկտեղ աճել է մեղրեցիների կենցաղային պահանջկոտությունը: Դրան նախ մեծապես ազդել է այն փաստը, որ մեղրեցիները շփման մեջ էին ագուլիսցիների հարուստ եւ զարգացած մշակույթի, տնտեսության հետ, նրանց երեխաները սովորում էին Ագուլիսի ավագ դպրոցներում եւ վարժարաններում: Այո, Հայաստանում առաջին դաշնամուրը եւ առեւտրական կոոպերատիվը եղել են Մեղրիում: Եվ Պետերբուրգում, երբ Ազարյա Ադելյանը դիմել է պրոֆեսորին՝ նրանից խնդրելով կոոպերատիվի կանոնադրություն, պրոֆեսորը հարցրել է, թե որտեղից է: Ադելյանը պատասխանել է՝ Կովկասից: «Բոժե մոյ». բացականչել է պրոֆեսորը, այս ինչ եմ լսում, մինչ մենք կարծում ենք, որ Կովկասը մի հետամնաց երկիր է, բայց այսօր պարզվում է, որ այնտեղ մտածողներ կան սպառողական կոոպերացիայի մասին: Ինչպես տեսնում եք, Կովկասի մասին Ռուսաստանի մայրաքաղաքում կարծիք էր ձեւավորվում հեռավոր Մեղրու միջոցով: Այս բոլորը մանրամասնում եմ այն բանի համար, որ նոր սերունդը, աշակերտները, ուսուցիչները եւ, ինչու ոչ, նաեւ ծնողները գիտակցեն, որ իրենք են շարունակողն այն մեղրեցիների, որը, իհարկե, պատվաբեր է, բայց եւ պարտավորեցնող:

Թագուհի Մկրտչյան

Լիլիթ Մարտիրոսյան

Ինչպես տեսնում ենք, մեղրեցիները 100 տարի առաջ են գտել լավ ապրելու բանալին, դա կրթությունն է, լիարժեք, իրական, իսկական կրթությունը: Այն բոլոր ժամանակներում եւ բոլոր հասարակարգերում եղել է, կա ու կմնա որպես բարձրագույն արժեք, որպես պետությունների ու ազգերի առաջընթացը, զարգացումն ապահովող անհրաժեշտ պայման: Կրթության հանդեպ այսօրվա թերահավատությունը բավարար հիմքեր չունի, եւ որքան շուտ ձերբազատվենք դրանից, այնքան ավելի լավ:

Մեր դպրոցը հիմնականում եղել է ինտերնացիոնալ դպրոց: Այն 1922թ. հիմնադրվել է որպես առաջին դասի: Մեզ հաջողվեց Հայաստանի կենտրոնական արխիվից ստանալ դրա հաստատումը: Ունեցել է ադրբեջանական եւ հայկական դասարաններ: Օրինակ, 1967 թվականին դպրոցում գործում էին 10 ադրբեջանական, 5 հայկական դասարաններ: Դպրոց էր հաճախում 289 աշակերտ: 1978թ. համապատասխանաբար՝ 10 ադրբեջանական, 2 հայկական եւ 257 աշակերտ: 1989թվականից գյուղում գործում է լիարժեք հայկական միջնակարգ դպրոց:

Լեհվազի դպրոցն աշխատանքային մեծ դարբնոց է եղել շատ ուսուցիչների համար: Նրանք այժմ ճանաչված մանկավարժներ են, շքանշանակիրներ, կրթական համակարգի ղեկավար աշխատողներ եւ սիրով են հիշում այստեղ աշխատած տարիները:

Կարծում եմ բոլորդ համամիտ եք, որ մեր պետության ապագան մեծապես պայմանավորված է լավ կրթական համակարգով: Կարծում եմ նաեւ, որ այսօր մեր հասարակության մեջ առկա շատ բացասական երեւույթներ տեղ չէին ունենա, եթե ունենայինք որակյալ կրթական համակարգ: Մեր գյուղի ապագան եւս կախված է դպրոցի մակարդակից: Կարելի է ասել, որ վերջին տարիներին մեզ մոտ եւս այդ ուղղությամբ քիչ բան չի արվել, բայց դա, անկասկած, բավարար չէ:

Մեկ անգամ եւս շնորհավորում եմ բոլորիս՝ դպրոցի 90-ամյակի կապակցությամբ եւ հավաստիացնում, որ Լեհվազի դպրոցի հաջողությունները դեռ առջեւում են:

ԺՈՐԱ ՄԻՐԶՈՅԱՆ
Լեհվազի դպրոցի նախկին տնօրեն

Այունյաց երկիր
www.syuniacyerkir.am

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի Ց ■ ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ

ՇԱԲԱԹ ● 15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2012Թ ● № 24 (265)

ՏԻՄ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ի՞նչ ասել է ընտրություն

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

Ի գիտություն բոլոր նրանց, ովքեր համայնքի ղեկավարի պաշտոնում սեպտեմբերի 9-ին նշանակվել, արտադրվել կամ վերարտադրվել են եւ ովքեր, այդուհանդերձ, փորձում են ներկայանալ իբրեւ ընտրյալ, ինչը, ցավոք, հայոց լեզուն թույլ չի տալիս: Ստորեւ բերում ենք մեր բազմաթիվ բառարաններից երեքի բացատրությունը:

1. Էդ.Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Երեւան-1976, էջ 409:
   Ընտրություն, Նա կամ այն բանը, որ ընտրվել է, ինչ-որ ջոկելով ընտրում են: Նա կամ այն, որից կարելի է ընտրել՝ ջոկել, որոշ իրերի (կամ անձանց) հավաքածու խմբից, որոնցից կարելի է ջոկել իր ուզածը՝ անհրաժեշտը, արժեքավորը:
2. Նոր բառգիրք հայկազեանց լեզուի, հատոր առաջին, Երեւան-1979, էջ 786:
   Ընտրութիւն, Ընտրութի լինի ի մէջ քաջացն եւ վատացն:
3. Հր.Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Բ հատոր, Երեւան-1973, էջ 132:
   Ընտիր... Բառի հնագույն գրչութիւնն է ընդիր, յետնաբար դարձած ընտիր: Ըն(դ) նախդիրով դիր (դնել) արմատից. «որոշել, սահմանել, անջատել, բաժանել»: «Ամէնից լաւը, ջոկուածը»: Այս բոլորը նշանակում են «հատեղէնների միջից քարերն ու կեղտերը ջոկել»:

Փոքրիկ այս մեջբերումները (նշված բառերի մյուս իմաստները բխում են դրանցից) ցույց են տալիս, որ համայնքի ղեկավարի մեկ թեկնածուի պարագայում սեպտեմբերի 9-ին տեղի ունեցած միջոցառումը չի կարող կոչվել (որքան էլ կամենանք) ընտրություն, եւ գյուղապետի կամ քաղաքապետի աթոռն այդ կերպ զբաղեցնողը չի կարող ընտրյալ համարվել: Պատճառը մեկն է՝ ինչպես մեր բառարաններն են ասում՝ մարդիկ հնարավորություն չեն ունեցել ընտրություն անել «ի մէջ քաջացն ու վատացն», մարդիկ հնարավորություն չեն ունեցել «հատեղէնների միջից քարերն ու կեղտերը ջոկել»:

Իսկ որո՞նք են մարզի համայնքները, որտեղ մեկ թեկնածուի պատճառով մարդիկ չեն կարողացել ընտրություն կատարել: Ահա՝ քաղաքներից՝ Կապան, Քաջարան, Ագարակ, գյուղերից՝ Եղվարդ, Լեռնաձոր, Լիճք, Կարճեւան, Նորաշենիկ, Տանձավեր, Քաջարան, Ակներ, Գետաթաղ, Գորայք, Թասիկ, Խոզնավար, Խոտ, Կորնիձոր, Հալիձոր, Հարթաշեն, Հարժիս, Ներքին Խնձորեսկ, Շաղատ, Շենաթաղ, Սվարանց, Վաղատին, Վերիշեն, Տաթեւ, Տոլորս, Քարահունջ:

Հարգենք մեր լեզուն եւ զերծ մնանք նշված համայնքների ղեկավարներին ընտրյալ անվանելուց:

«ՍՅՈՒՆՅԱՑ ԵՐԿԻՐ»

Խոսք՝ Ույծ համայնքի ընտրողներին

Ույծ համայնքի ղեկավարի թեկնածու Երվանդ Եղիազարյանը «Սյունյաց երկրի» միջոցով շնորհակալական խոսք է ուղղել համայնքի բնակիչներին: Շնորհակալագրում մասնավորապես ասված է. «...Տեսնելով մեր համայնքում տիրող բարոյահոգեբանական լարված մթնոլորտը, ինչպես եւ ամենաթողության, անպատասխանատվության, անգործության իրավիճակը, հավատալով հանրապետության ղեկավարության՝ ազատ ու արդար ընտրություններ անցկացնելու մասին խոստումներին, ունենալով համայնքը ներկա անմխիթար վիճակից դուրս բերելու ծրագիր, ես առաջադրվեցի համայնքի ղեկավարի թեկնածու: Սակայն, ինչպես ցույց տվեցին քարոզարշավի ընթացքն ու քվեարկության օրվա իրադարձությունները, իմ մրցակիցն ընտրությունը վերածեց ճնշումների, առեւտրի, ընտրական օրենսգրքի բազմաթիվ խախտումների՝ ունենալով գյուղից դուրս որոշ պաշտոնյաների հովանավորությունը: Ընտրության արդյունքները չեմ բողոքարկում՝ նպատակ ունենալով էլ ավելի չլարել համայնքի մթնոլորտը: Նաեւ չեմ շնորհավորում գյուղապետ դարձած մրցակցիս, քանի որ նա դարձավ ոչ թե գյուղացիների, այլ իրեն հովանավորողների ընտրյալը: Ցավում եմ նաեւ, որ որոշ մարդիկ վաճառվեցին մի քանի գրոշով: Իմ անկեղծ շնորհակալությունն եմ հայտնում բոլոր նրանց, ովքեր կարողացան դիմադրել բազմաթիվ ճնշումներին ու ֆինանսական գայթակղությանը՝ քվեարկելով իմ օգտին: Ձեզ հետ կլինեմ այսուհետ եւս»:

■

Համայնքների ղեկավարները՝ սեպտեմբերի 9-ի քվեարկության արդյունքում

Համայնքի անվանումը	Ազգանուն, անուն	Կուսակցական պատկանելությունը
Ագարակ քաղաք	Ջաքարյան Մխիթար	ՀՀԿ
Կապան	Հայրապետյան Աշոտ	ՀՀԿ
Քաջարան	Գեւորգյան Վարդան	ՀՀԿ
Մեղրի	Հովհաննիսյան Արշավիր	անկ.
Սիսիան	Հակոբջանյան Աղասի	ԲՀԿ
Ագարակ գյուղ	Մարտիրոսյան Մարատ	ՀՀԿ
Անտառաշատ	Դավթյան Արսեն	ԲՀԿ
Առաջաձոր	Մովսեսյան Դավիթ	ՀՅԴ
Գեղանուշ	Կոստանդյան Իվան	անկ.
Գեղի	Գրիգորյան Վասիլ	ՀՀԿ
Գուդեմնիս	Գրիգորյան Արտուշ	ՀՀԿ
Դավիթբեկ	Հակոբյան Արտավազ	ՀՀԿ
Եղվարդ	Ջաքարյան Սպարտակ	ՀՀԿ
Լեռնաձոր	Պետրոսյան Ստեփան	ՀՀԿ
Լիճք	Միրզոյան Հովիկ	ՀՀԿ
Խդրանց	Սարգսյան Գնել	ՀՀԿ
Օ՞ավ	Ջաքարյան Սեյրան	ՀՀԿ
Կարճեւան	Ավետիսյան Արմեն	ԲՀԿ
Ներքին Խոտանան	Շամիրյան Շամիր	ՀՀԿ
Ներքին Հանդ	Բաղդասարյան Խաչատուր	ՀՀԿ
Նոր Աստղաբերդ	Թեւանյան Սուրիկ	ՀՀԿ
Նորաշենիկ	Ավանեսյան Ռոմիկ	ՀՅԴ
Շիկահող	Պատվականյան Ժիրայր	ՀՀԿ
Շվանիձոր	Օհանյան Հովհաննես	ՀՀԿ
Շրվենանց	Մանուկյան Արմինե	ՀՀԿ
Սեւաքար	Հակոբյան Արշավիր	ՀՀԿ
Սյունիք	Սարգսյան Սամվել	ՀՀԿ
Սրաշեն	Աբրահամյան Հենզել	ՀՀԿ
Վահրավար	Առաքելյան Սարգիս	ՀՀԿ
Վանեք	Առաքելյան Սամվել	ՀՀԿ
Վերին Խոտանան	Հակոբյան Կարեն	ՀՀԿ
Տանձավեր	Հարությունյան Արսեն	ՀՀԿ
Տաշտուն	Գաբրիելյան Հենրիկ	ՀՀԿ
Տավրուս	Կարապետյան Սլավիկ	անկ.
Քաջարան գյուղ	Աթայան Ռաֆիկ	ՀՀԿ
Դաստակերտ	Ֆիլոսյան Նաիրի	ՀՀԿ
Ախլաթյան	Բեգլարյան Արմեն	ՀՀԿ
Ակներ	Մինասյան Սպարտակ	ՀՀԿ
Աղիտու	Ավետիսյան Ավետիս	ՀՀԿ
Անգեղակոթ	Խաչատրյան Արմեն	ՀՀԿ
Արավուս	Հովսեփյան Արգամ	ՀՀԿ

Համայնքի անվանումը	Ազգանուն, անուն	Կուսակցական պատկանելությունը
Բալաք	Սարգսյան Սասուն	ՀՀԿ
Բարձրավան	Ավագյան Օնիկ	ՀՀԿ
Բնունիս	Հովհաննիսյան Վլադիմիր	ՀՀԿ
Բռնակոթ	Առաքելյան Ատոմ	անկ.
Գետաթաղ	Դավթյան Արթուր	ՀՀԿ
Գորայք	Առուստամյան Առուստամ	անկ.
Դարբաս	Միրզոյան Մայիս	անկ.
Թասիկ	Հովհաննիսյան Խաչիկ	ՀՀԿ
Իշխանասար	Պետրոսյան Արարատ	անկ.
Լծեն	Նիկալյան Հրահատ	ՀՀԿ
Խնածախ	Թավադյան Կարո	ՀՀԿ
Խոզնավար	Գրիգորյան Վարո	ՀՀԿ
Խոտ	Գրիգորյան Մարտիրոս	ՀՀԿ
Օղուկ	Ամիրջանյան Մեսրոպ	ՀՀԿ
Կոռնիձոր	Խաչատրյան Արկադիա	ՀՀԿ
Հալիձոր	Ասրյան Սամվել	ՀՀԿ
Հարթաշեն	Վանեսյան Գագիկ	ՀՀԿ
Հարժիս	Հարությունյան Սուրիկ	ՀՀԿ
Հացավան	Մարգարյան Շուշան	ՀՀԿ
Մուցք	Նավասարդյան Դրաստամատ	ՀՀԿ
Ներքին Խնձորեսկ	Արզանյան Մարտունի	ՀՀԿ
Նորավան	Պապյան Սլավիկ	անկ.
Շաղատ	Խաչատրյան Տիգրան	ՀՀԿ
Շաքի	Ղազարյան Վահան	ՀՀԿ
Շենաթաղ	Մուսայելյան Երջանիկ	ՀՀԿ
Շինուհայր	Երեմյան Սմբատ	ՀՀԿ
Որոտան/ Սիսիան	Ամիրխանյան Սերյոժա	ԲՀԿ
Ույծ	Ավետյան Արտակ	ՀՀԿ
Սալվարդ	Մեսրոպյան Վարդան	անկ.
Սառնակունք	Մկրտչյան Մանուչար	ՀՀԿ
Սպանդարյան	Սիմոնյան Սպարտակ	ՀՀԿ
Սվարանց	Մարգարյան Արթուր	ՀՀԿ
Վաղատին	Գրիգորյան Շահեն	ՀՀԿ
Վերիշեն	Օրդյան Արարատ	ՀՀԿ
Տաթեւ	Սիմոնյան Մուրադ	ՀՀԿ
Տանձատափ	Մուշեղյան Ռոբերտ	ՀՀԿ
Տեղ	Գալստյան Սաղաթել	ՀՀԿ
Տոլորս	Առաքելյան Մարատ	ՀՀԿ
Քաշունի	Հակոբյան Գառնիկ	ՀՀԿ
Քարահունջ	Ավետյան Լուսինե	ՀՀԿ
Քարաշեն	Շահնուբարյան Գառնիկ	ՀՀԿ

Մարզի քաղաքային համայնքների ավագանու կազմը՝ ընտրված սեպտեմբերի 9-ին

N/N	Ազգանուն, անուն	Ստացած ձայների թիվը	Կուսակցական պատկանելությունը
ԱԳԱՐԱԿ			
1	Ադամյան Հարություն	405	ՀՀԿ
2	Գեւորգյան Խաչատուր	362	ՀՀԿ
3	Հովագիմյան Հարություն	235	ՀՀԿ
4	Խաչատրյան Գեւորգ	231	ՀՀԿ
5	Օհանյան Լիբիկ	227	անկ.
6	Հովհաննիսյան Մաթեւոս	211	ԲՀԿ
7	Մանուկյան Բուրաստան	139	ՀՀԿ
8	Վարդանյան Հրաչ	132	ՀՀԿ
9	Մելքումյան Արտուր	129	անկ.
ԳՈՐԻՍ			
1	Յոլյան Հրաչ	963	անկ.
2	Միրզաթունյան Արծրունի	601	ՀՀԿ
3	Ղեւոնդյան Մասիս	598	ՀՀԿ
4	Դոլունց Դավիթ	505	անկ.
5	Տիգրանյան Գոռ	460	ՀՀԿ
6	Աղաջանյան Էրիկ	425	ՀՀԿ
7	Ոսկանյան Ոսկան	417	ՀՀԿ
8	Ակլունց Ռուստամ	388	ՀՀԿ
9	Բաբայան Վահե	293	անկ.
10	Մելքումյան Արամ	292	ՀՀԿ
11	Ասլանյան Արմեն	272	անկ.
12	Մկրտչյան Արշակ	262	ՀՀԿ
13	Պետրոսյան Լեւոն	233	ՀՀԿ

N/N	Ազգանուն, անուն	Ստացած ձայների թիվը	Կուսակցական պատկանելությունը
14	Տոռոզյան Ռուզաննա	201	անկ.
15	Հովսեփյան Վահե	200	անկ.
ԿԱՊԱՆ			
1	Միքայելյան Վահագն	1280	անկ.
2	Պետրոսյան Վահե	1055	անկ.
3	Դանիելյան Վահե	831	անկ.
4	Առաքելյան Վլադիկ	633	ՀՀԿ
5	Մելիքյան Մուրադ	553	ՀՀԿ
6	Մեսրոպյան Նապոլեոն	501	անկ.
7	Մովսիսյան Ժան	472	անկ.
8	Թումանյան Արա	462	ՀՀԿ
9	Մարտիրոսյան Արսեն	457	անկ.
10	Մկրտչյան Արա	448	անկ.
11	Գրիգորյան Վիլեն	410	անկ.
12	Միրզոյան Միեր	402	անկ.
13	Շահինյան Կարեն	384	անկ.
14	Աթաջանյան Միեր	369	անկ.
15	Սահակյան Արթուր	354	ՀՀԿ
ՄԵՂՐԻ			
1	Հայրապետյան Սուրեն	245	անկ.
2	Հարությունյան Համիկ	201	ՀՀԿ
3	Հովհաննիսյան Ալեքսան	186	ՀՀԿ
4	Ադամյան Կարեն	175	ԲՀԿ
5	Մարտիրոսյան Կոստանտ	157	անկ.
6	Բեգլարյան Մակար	147	ՀՅԴ
7	Օհանյան Միխաել	147	անկ.
8	Սարգսյան Շուշանիկ	137	ՀՀԿ
9	Հակոբյան Գարեգին	127	անկ.
ՍԻՍԻԱՆ			
1	Ղազարյան Վարոս	528	անկ.
2	Ալեքսանյան Հովիկ	476	ՀՀԿ
3	Բաբայան Համլետ	450	անկ.
4	Դավթյան Արթուր	446	անկ.
5	Գրիգորյան Արման	366	ԲՀԿ
6	Ավագյան Լեւոն	358	Ռամկ. ազ.
7	Մինասյան Տարոն	357	անկ.
8	Վարդանյան Սուրեն	356	ՄԱԿ
9	Աղայան Գոռ	350	ԲՀԿ
10	Իվանյան Վարդան	344	անկ.
11	Սահակյան Նարեկ	299	ԲՀԿ
12	Խաչատրյան Հրաչիկ	284	անկ.
13	Գրիգորյան Սրբուհի	237	անկ.
14	Օհանյան Դավիթ	234	ԲՀԿ
15	Խաչատրյան Արա	218	ԲՀԿ
ՔԱՋԱՐԱՆ			
1	Արզումանյան Երվանդ	356	անկ.
2	Ավետիսյան Արթուր	322	անկ.
3	Ջեյնալյան Սենիկ	304	ՀՀԿ
4	Հակոբյան Դորետա	248	ՀՀԿ
5	Համբարձումյան Կարեն	246	անկ.
6	Գեւորգյան Դավիթ	244	ՀՅԴ
7	Հայրապետյան Կամո	241	անկ.
8	Աբգարյան Վրեժ	213	անկ.
9	Աթայան Կարեն	212	ԲՀԿ
10	Աբրահամյան Արտակ	206	ՀՀԿ
11	Առաքելյան Սամվել	204	անկ.

Բացահայտվել է Հարթաշենի գյուղապետի անառակաբարո գործողությունների մեկ այլ զոհ

«Հոկտեմբերի 7-ին կլրանա մեկ տարին, ինչ ես ամեն գիշեր՝ ժամը 4-ին, արթնանում եմ եւ այլեւս չեմ կարողանում քնել: Հենց այդ գիշեր ու այդ ժամին ծնված նորածին տղայիս իմ ձեռքով նետեցի խոտերի մեջ», - պատմում է 21-ամյա Աննա Մկրտչյանը: Նա այս մասին հայտարարել է նաեւ օգոստոսի 23-ին Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի Գորիսի նստավայրում շարունակվող Գորիսի տարածաշրջանի Հարթաշենի գյուղապետ Ազատ Ղուկասյանի գործով դատական նիստում:

Գյուղապետի դեմ քրեական գործ է հարուցվել գյուղի դպրոցի 14-ամյա աղջկա նկատմամբ անառակաբարո գործողություններ կատարելու մեղադրանքով: Աննան ասում է, որ իր երեխայի հայրը եղել է նույն մեղադրյալը:

Աննայի խոսքով՝ իր՝ դատարանում ցուցմունք տալու նախաձեռնությունն իրենն է եղել. *«Ամիսներ շարունակ սպասում էի, որ մի օր այդ մասին հրապարակավ կհայտարարեմ, մինչեւ առիթ եղավ: Իմ կյանքը կարծես թե արդեն խորտակվել է, բայց որքան ժամանակն անցնում է, ես ավելի ու ավելի եմ մեղավոր զգում երեխայիս համար ու այլեւս չեմ կարող լռել»:*

Ըստ Աննայի՝ իր եւ Ազատ Ղուկասյանի հարաբերությունների մասին գյուղում շատերն են իմացել, բայց այն մասին, որ ինքը երեխայի էր սպասում, անգամ մայրը չգիտեր: *«Ամեն ինչ սկսվեց նրանից, որ մեր հարեւանի տնից ոսկեղենի գողության համար սկսեցին ինձ կասկածել: Այն ժամանակ ես 9-րդ դասարանում էի: Հիմա չգիտեմ էլ՝ այդ մեղադրանքն իրականում կար, թե նա էր հորինել, բայց մի օր ինձ կանչեց ու խոստացավ օգնել, որպեսզի գործը փակվի, եւ առաջարկեց գիշերով ոստիկանություն գնալ՝ իբր բացատրություն գրելու համար: Այնքան էի վախենում, որ կբանտարկեն, համաձայնվեցի, բայց մտքովս էլ չանցավ, որ անգամ Գորիս չենք հասնի… Երանի մի չորս տարի գնայի, բանտ նստեի, բայց էս մղձավանջը չապրեի:*

Դրանից հետո պարբերաբար հանդիպում էինք, այդ ժամանակ դպրոցը չէի ավարտել, անգամ վերջին զանգի շորերս առավ ու միշտ սպառնում էր: Խանդում էր, վախեցնում էր, որ հանկարծ որեւէ մեկին ոչինչ չպատմեմ: Գիշերվա կեսին զանգում էր, եթե հրաժարվում էի հանդիպել, ասում էր, թե գործը բացել կտա: Երբ հղի էի, հաճախ էի նկատում, որ այժմյան զոհը՝ անչափահասը, գյուղապետարան է գնում: Զանգում էի հեռախոսով, հարցնում էի, թե ինչու ես էդ էրեխուն կանչել, պատասխանում էր, թե թոշակի գործով է:

Արգելեց անգամ, որ հիվանդանոցում ունենամ երեխայիս. գիշերով տանն ունեցա ու ինքս էլ իմ ձեռքով… Այդ մասին նա էլ էր տեղյակ: Եթե թողներ, հիվանդանոցում կունենայի, երեխան կտայի բժշկին, թող մեկը որդեգրեր: Բայց երբ պիտի ծնվեր երեխան, նա փախել էր Երեւան, էնտեղից էլ զանգեց, սպառնաց՝ կորցրու դրան», – պատմում է Աննան:

Նա հավելում է, որ ինչ էլ լինի, ինքն իր ցուցմունքը հետ չի վերցնի եւ պատրաստ է դատարանում նորից վկայություն տալ: *«Կողքից փորձում են ինձ համոզել՝ հրաժարվեմ ցուցմունքից, տղան հանդիպելիս սկսում է հայհոյել, բայց ամբողջ գյուղը գիտի այդ պատմությունը, շատերն են ինձ հավատում: Գուցե եւ ինչոր մեկը ճշմարտությունն ինձնից իմանա, կարողանա ներել ինձ ու ընդունել, ես էլ երջանիկ լինեմ»,* – ասում է Աննան:

Այն հարցին, թե չի վախենում, որ իրեն կարող են մեղադրել մանկասպանության համար, Աննան պատասխանում է. *«Դրանից իմ դժբախտությունը չի ավելանա, բայց այս մեկ տարվա ընթացքում եւ հետո էլ երեւի ես շարունակելու եմ տանջվել իմ արարքի համար՝ անկախ նրանից, թե որտեղ կլինեմ՝ ազատության մեջ, թե…»:*

Համագյուղացիներից ոմանց կարծիքով՝ այս մասին դատարանում ցուցմունք տալու համար Աննային միայն մայրն է մեղադրում, փորձում է ամեն կերպ նրան հեռու պահել, բայց աղջիկը շարունակում է համառել եւ իր դժբախտության հատուցումը պահանջել:

Նույնն է պնդում նաեւ այս գործով տուժողի՝ 14-ամյա աղջկա մայրը՝ Էլմիրան: *«Ո՞վ է ասում, թե իմ երեխան մտավոր հետամնաց է. եթե այդպես լիներ, ինչո՞ւ պիտի նա դպրոց հաճախեր: Դեպքից հետո աղջիկս այնպիսի սթրեսային վիճակում էր, որ հույս չունեինք, թե կարող է գոնե խոսելու ընդունակությունը վերականգնվի»,* – ասում է Էլմիրան:

Այս ուսումնական տարվանից սկսած՝ 14-ամյա աղջիկն այլեւս դպրոց չի հաճախում: *«Վախենում եմ, որ կգնա նույն դասարանը, որտեղ դեպքն է կատարվել, եւ նորից կսկսի հուզվել: Դրա համար, չնայած աղջկաս ցանկությանը, այլեւս դպրոց չենք թողնում գնա: Գիտեմ, որ աղջիկս իր նախկին խանդավառությունը, պարզամտությունն ու անհոգությունն այլեւս չի գտնելու, գիտեմ նաեւ, որ դրանք համարյա անհնար է վերականգնել: Դրա համար, եթե անգամ այս դատարանը մեղմ պատիժ սահմանի մեղադրյալի նկատմամբ, մինչեւ գերագույն եմ հասնելու»,* – արտասվում է մայրը: Նա ասում է, որ տարբեր միջոցներով փորձում են ահաբեկել, երբեմն փող են առաջարկում, բայց դեռ հույս ունի, որ արդար վճիռ կկայացվի:

Հիշեցնենք, որ դատավոր Նապոլեոն Օհանյանի գլխավորությամբ իրականացվող դռնփակ դատավարության հերթական նիստը օգոստոսի 30-ին չի կայացել այն պատճառով, որ մեղադրյալի փաստաբանը հրաժարվել է իր պաշտպանյալից: Հաջորդ նիստը նշանակված է սեպտեմբերի 11-ին:

4 սեպտեմբերի 2012թ.,
www.hetq.am

Հարթաշենի դպրոցում կեղծվել է մրցույթի արդյունքը

ՀԱՂՈՐԴՈՒՄ

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ պարոն Աղվան Հովսեփյանին

Գորիս քաղաքի բնակիչ Անի Մովսիսյանը ս.թ. օգոստոսի 23-ին մասնակցել է Գորիսի տարածաշրջանի Հարթաշենի միջնակարգ դպրոցի պատմության ուսուցչի թափուր տեղի համար հայտարարված մրցույթին: Մրցույթին մասնակցել է երեք հոգի՝ վեց դիմումատուից: Անի Մովսիսյանը եւ հավակնորդներից մեկը գրավոր քննությունից հաղթահարել են անցողիկ շեմը. Անին 15 որպեում պատասխանել է բոլոր հարցերին եւ ստացել 24 բալ, մրցակիցը հարցերին պատասխանել է 90 որպեում եւ ստացել 26 բալ (դպրոցի տնօրենն այդ հայտարարությունն արել է առանց նրա գրավոր աշխատանքը ցույց տալու): Բանավոր քննությունից հետո հայտարարվել է Անի Մովսիսյանի բացարձակ առավելության մասին: Մրցութային հանձնաժողովը նույն պահին կազմել է արձանագրություն, որից հետո տնօրեն Սիրազարդ Մկրտչյանը (բազմաթիվ մարդկանց ներկայությամբ) հայտարարել է Անի Մովսիսյանի հաղթանակի մասին: Հաջորդ օրը թերթի խմբագրի հետ ունեցած հեռախոսազրույցում տնօրենը հավաստել է, որ՝ «Անին է հաղթողը, նա իր գիտելիքներով հիացրեց բոլորիս»: Մրցույթի օրը Հարթաշենից վերադարձող ուսուցչուհին՝ Իրինա Կառլենովնա անվամբ (ով մրցութային հանձնաժողովի անդամ է եղել), Անի Մովսիսյանին եւ մյուս ներկաներին հայտարարել է, որ մրցույթի արդյունքների մասին արձանագրությունն իսկապես կազմված է, ինքն էլ ստորագրել է այդ արձանագրությունը, ըստ որի Անի Մովսիսյանը ճանաչվել է հաղթող: Օգոստոսի 27-ին դպրոցի տնօրենը հեռախոսով տեղեկացրել է Անիի հորը՝ Սերժիկ Մովսիսյանին, որ Անիի հրամանը՝ ուսուցիչ նշանակվելու մասին, տրված է, նա ընդունված է աշխատանքի: Այդ ամենից հետո, սակայն, տեղի է ունեցել ակնհայտ կեղծարարություն: Տնօրենը հայտարարում է, որ իր վրա ճնշում են գործադրել, եւ ինքը ստիպված կեղծել է փաստաթղթերը, որ ինքը չէր կարող դիմադրել: Տնօրենի այդ հայտարարության հավաստիությունը փորձեցինք ճշտել Սյունիքի մարզպետարանի կրթության վարչության նորանշանակ պետ Լեւոն Մարգարյանից: Նա խոստացավ պարզել, եւ մեկ օր հետո հեռաձայնեց ու ասաց, որ մրցույթում իսկապես հաղթել է Անի Մովսիսյանը, որ նա փայլուն գիտելիքներ է ցուցաբերել: Բայց, երբ երկրորդ անգամ տեղեկացրինք Լեւոն Մարգարյանին տեղի ունեցած կեղծարարության մասին, նա ասաց. «Ես նորանշանակ եմ, ես Հարթաշենի դպրոցի տնօրենին չեմ ճանաչում, մի անգամ եմ հեռախոսով խոսել»: Եվ՝ վերջ:

Ահա այսպիսի խարդախություններով աղավաղվել են Հարթաշենի դպրոցում անցկացված մրցույթի արդյունքները: Այդ ամենից հետո դպրոցի տնօրենը համառորեն հրաժարվում է մրցույթի արդյունքների մասին օգոստոսի 23-ին գրված արձանագրության եւ օգոստոսի 27-ին արձակված հրամանի պատճենները տալ ծնողներին եւ թերթի խմբագրությանը: Նա միայն ասում է. «Ինձ հանձնարարել են, իսկ ես կատարել եմ»:

Հարգելի՛ պարոն Հովսեփյան

Խնդրում ենք Ձեր միջամտությունը: Եթե Ձեր քննությամբ համոզվեք, որ մրցույթի արդյունքները չեն կեղծվել, ապա կհավատանք Ձեզ եւ ներողություն կխնդրենք դպրոցի տնօրենից:

Ի դեպ, դա նույն Սիրազարդ Մկրտչյանն է, ում տնօրինած դպրոցում, ում թողտվության արդյունքում այս տարվա գարնանը մանկահասակ աղջիկ է բռնաբարվել, իսկ ինքը դեռեւս համապատասխան գնահատականի չի արժանացել:

«ՍՅՈՒՆՅԱՑ ԵՐԿԻՐ»

Սյունյաց երկիր
www.syuniacyerkir.am

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ■ ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ

ՇԱԲԱԹ • 15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2012Թ • № 24 (265)

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Սյունիքի մարզի Շիկահողի միջն. դպրոցի քիմիա-կենսաբանության, ֆիզկուլտուրայի, ինֆորմատիկայի եւ գերմաներենի ուսուցիչների թափուր տեղերի համար:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր (հանրակրթական առարկայական ուսումնական ծրագրերին համապատասխան) եւ հարցազրույց (մանկավարժական մասնագիտական գործնական հմտություններ):

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում,
2. Բարձրագույն կրթության մանկավարժության որակավորման աստիճանը հավաստող ավարտական փաստաթուղթ (դիպլոմ), կամ վերջին 10 տարվա ընթացքում մանկավարժական կամ ուսուցչական գործունեության առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժը հաստատող քաղվածք աշխատանքային գրքույկից,
3. Անձնագրի պատճեն,
4. Ինքնակենսագրություն,
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ:

Փաստաթղթերն ընդունվում են հայտարարության հրապարակելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

Տեղեկությունների համար զանգահարել՝
(093) 94 16 62,
(0285) 6 05 64:

Շիկահողի միջն. դպրոցի տնօրեն՝ Հ.Ղազարյան

Սյունյաց երկիր

ՏԱՍՆՕՐՅԱ ԹԵՐԹ

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռախոս՝ (0285) 5 25 63,
(091) 45 90 47,
(077) 06 28 02:
Էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«**ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ**» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 2000, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 14.09.2012թ.:

Հաղորդում

Սյունիքի մարզի դատախազի պաշտոնակատար պարոն Հ. Կարապետյանին

ԱՐՇԱՎԻՐ ԽԱԼԱՓՅԱՆ

Սյունիքի հակակոռուպցիոն կենտրոնի համակարգող, փաստաբան

Հարգելի՛ պարոն Կարապետյան

30.08.2012թ. Կապան քաղաքային համայնքի ղեկավար եւ Կապան քաղաքային համայնքի ղեկավարի թեկնածու Արտուր Աթայանը հայտարարություն է տարածել, որից ներկայացնում ենք որոշ հատվածներ. **«Ես կարծում էի, թե կլինեն քաղաքակիրթ ընտրություններ, եւ բոլոր թեկնածուներին հնարավորություն կընձեռվի օրենքով սահմանված կարգով կազմակերպել ընտրական գործընթացը:**

Սակայն օրեցօր մարզկենտրոնում շիկանում է մթնոլորտը, ու կապանցու քվեին արժանանալու համար կիրառվում են անընդունելի մեթոդներ: Իմ կողքին կանգնած մարդիկ ենթարկվում են հոգեբանական, ֆինանսական ճնշումների:

Ինձ համար քաղաքապետի աթոռն ինքնանպատակ չէ, ու ես չեմ կարող նման ծանր բեռով շարունակել ընտրապայքարն ու վտանգի տակ դնել մարզկենտրոնի բարոյահոգեբանական մթնոլորտն ու միջանձնային հարաբերությունները: Ես չեմ ուզում, որ իմ պատճառով տուժեն իմ ընկերներն ու համախոհները...»:

Հայտարարության վերջում նշված է, որ հանուն Կապանի եւ հանուն կապանցու Արտուր Աթայանը հրաժարվում է ընտրապայքարից: Արտուր Աթայանը ինքնաբացարկի դիմում է ներկայացրել եւ դուրս եկել ընտրապայքարից:

Վերը նշված հայտարարության ամբողջական տեքստը հնչել է հեռուստատեսությամբ եւ հրապարակվել է մամուլում: Արտուր Աթայանի հայտարարության տեքստին ծանոթանալուց հետո մենք կարող ենք ենթադրել, որ վերը նշված արարքների հատկանիշները, մեր կարծիքով, կարող են համընկնել առնվազն հետեւյալ արարքների հատկանիշներին.

Քաղաքացու ընտրական իրավունքի ազատ իրականացմանը կամ ընտրական հանձնաժողովի աշխատանքին խոչընդոտելը, ինչպես նաեւ ընտրական հանձնաժողովի անդամի, թեկնածուի կամ նրա վստահված անձի, կուսակցության լիազորած անձի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը: Չենք կարող բացառել, որ վերը նշված արարքները կատարվել են գույքին վնաս պատճառելու սպառնալիքով, զուգորդվել են բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով, կատարվել են պաշտոնեական դիրքն օգտագործելով, կատարվել են մի խումբ անձանց կողմից, զուգորդվել է անձին ազատությունից զրկելով:

Ստեղծված իրավիճակում առնվազն տարօրինակ ենք համարում իրավապահ մարմինների լռությունը, առավել եւս, որ Արտուր Աթայանը մեկ այլ հայտարարությամբ չի հերքել իր առաջին հայտարարությունը:

Վերոգրյալի հիման վրա խնդրում եմ նյութեր նախապատրաստել եւ նախապատրաստված նյութերի հիման վրա քրեական գործ հարուցել:

Կից ներկայացնում եմ իմ անձնագրի եւ փաստաբանական գործունեության թիվ 731 արտոնագրի պատճենը:

■

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ

Ապրելու նշանաբանը... եւ բանաձեւը

Իր ազնվությամբ, մաքրությամբ, անսահման բարությամբ եւ արվեստագետին յուրահատուկ բնազդով ու նրբագեղությամբ է տիրապետում մասնագիտությանը «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ ուրոլոգիական բաժնի վարիչ, բժշկական գիտությունների թեկնածու, Կապանի պատվավոր քաղաքացի Ռոբերտ Քարամյանը:

Բժիշկ Ռոբերտ Քարամյանի աշխատանքը բարձր է գնահատում Կապան քաղաքի, Սյունիքի մարզի հասարակությունը եւ նրա հետ թեկուզ մեկ անգամ առնչված մարդը:

Սիրելի՛ բժիշկ, շնորհավորում եմ ծննդյանդ օրվա առթիվ, ապրի՛ր առողջ եւ թող քո նշանաբանն ու ապրելու բանաձեւը վարակիչ լինեն սկսնակ բժշկների համար:

Զաբելա Աբելյան
Արարատի մարզի Փոքր Վեդու միջնակարգ դպրոցի ուսուցչուհի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Սյունիքի մարզի Կարճեւան գյուղական համայնքի ղեկավարի

ՀՀ Սյունիքի մարզի Կարճեւանի գյուղական համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահի (ծածկագիր 3.1-1) համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

Մրցույթը կանցկացվի 2012թ. հոկտեմբերի 15-ին ժամը 11:00-ին Մեղրու քաղաքապետարանի վարչական շենքում:

Դիմող քաղաքացիները պահանջվող համապատասխան փաստաթղթերը պետք է ներկայացնեն համայնքի ղեկավարի աշխատակազմ կամ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ եւ ՀԳՄՏԾ գործունեության համակարգման վարչություն:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 9:00 - 18:00-ը, բացի շաբաթ եւ կիրակի օրերից: Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2012թ. հոկտեմբերի 1-ը մինչեւ ժամը 18:00-ը:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաեւ պաշտոնի անձնագրին եւ հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել համայնքի ղեկավարի աշխատակազմ՝ գ.Կարճեւան, հեռ.՝ (091) 33 34 56 եւ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ եւ ՀԳՄՏԾ գործունեության համակարգման վարչություն, հեռ.՝ (0285) 2 35 50:

Կարճեւան համայնքի ղեկավար

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Սյունիքի մարզի Քաջարանի քաղաքապետը հայտարարում է մրցույթ քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության հետեւյալ թափուր պաշտոններ զբաղեցնելու համար

I -.Համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների խմբի երկրորդ ենթախումբ

1. Քաղաքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ (ծածկագիր՝ 3,2-13)

■ Պատասխանատվություն է կրում իրավական ակտերի պահանջները եւ իրեն վերապահված լիազորությունները չկատարելու, կամ ոչ պատշաճ կատարելու կամ վերազանցելու համար: Իր անմիջական ղեկավարի հանձնարարությամբ մասնակցում է խնդիրների լուծմանը եւ գնահատմանը: Մշակում եւ ներկայացնում է քաղաքում իրականացվող սպորտային միջոցառումների պլանները: Մասնակցում է ՀՀ տոների եւ հիշատակի օրերի հետ կապված միջոցառումների կազմակերպմանը: Իր անմիջական ղեկավարի հանձնարարությամբ միջոցներ է ձեռնարկում հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ տարվող աշխատանքներում: Օժանդակում է քաղաքի տարածքում սոցիալական օգնության ծառայության գործունեությանը:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է

■ Առնվազն միջնակարգ կրթություն
■ «Տեղական ինքնակառավարման մասին» «Համայնքային ծառայության մասին» «Նախադպրոցական կրթության մասին», «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքների իմացություն: Տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը: Ունի համակարգչով եւ ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

2. Քաղաքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ / ծածկագիր՝ 3,2-14/

■ Պատասխանատվություն է կրում իրավական ակտերի պահանջները եւ իրեն վերապահված լիազորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու կամ վերազանցելու համար Իր անմիջական ղեկավարի հանձնարարությամբ մասնակցում է քաղաքապետարանի բնապահպանական եւ առողջապահական ծրագրերին վերաբերվող փաստաթղթերի պատրաստմանը:
■ Աջակցում է քաղաքի սանիտարահիգիենիկ միջոցառումների իրականացմանը: Մասնակցում է քաղաքի դպրոցներում քաղաքապետարանի կողմից իրականացվող էկոլոգիական կրթության եւ դաստիարակության զարգացմանն ուղղված ծրագրերի մշակմանը եւ միջոցառումների իրականացմանը: Մասնակցում է քաղաքի բնապահպանական կադաստրի վարմանը, քաղաքի էկոլոգիական երկրատեղեկատվական համակարգի պլանների բազայի թարմացմանը:
■ Իր անմիջական ղեկավարի հանձնարարությամբ մասնակցում է բնապահպանական եւ առողջապահական ծրագրերով նախատեսվող գնումների կազմակերպմանը, ապահովում է փաստաթղթերի պահպանությունը, մասնակցում բնապահպանական դասընթացներին եւ կլոր սեղաններին:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է

■ Առնվազն միջնակարգ կրթություն:
■ «Տեղական ինքնակառավարման մասին», «Համայնքային ծառայության մասին», «Կենդանական աշխարհի մասին», «Բուսական աշխարհի մասին», «Մթնոլորտային օդի պահպանության մասին», «Ազգաբնակչության էկոլոգիական կրթության եւ դաստիարակության մասին» ՀՀ օրենքների իմացություն:
■ Տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը: Ունի համակարգչով եւ ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Նշված թափուր պաշտոնները զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2012թ հոկտեմբերի 18-ին՝ ժամը 10.00-ին քաղաքապետարանի շենքում (ք. Քաջարան, Լեռնագործների 4):

Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն ՀՀ քաղաքացիները եւ Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք (այսուհետ՝ քաղաքացիներ):

Դիմող քաղաքացիները Քաջարանի քաղաքապետարանի աշխատակազմ կամ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ եւ ՀԳՄՀ վարչություն պետք է ներկայացնեն հետեւյալ փաստաթղթերը՝

■ դիմում մրցութային հանձնաժողովի անունով (ձեւը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս)
■ տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի /ների/, վկայականի /ների/ պատճենները՝ բնօրինակների հետ միասին, արական սեռի անձինք նաեւ զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
■ մեկ լուսանկար՝ 3x4 սմ չափսի,
■ անձնագրի պատճենը:
■ Քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր:

Քաղաքացիները մրցույթին ներկայանում են անձնագրի, դիպլոմի, աշխատանքային գրքույկի, իսկ արական սեռի անձինք՝ նաեւ զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի բնօրինակներով: Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 9.00-ից մինչեւ 18.00-ը, բացի շաբաթ եւ կիրակի օրերից: Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 30 սեպտեմբերի 2012թ.՝ մինչեւ ժամը 18.00-ը:

Մրցույթներին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաեւ պաշտոնի անձնագրին եւ հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել՝

Համայնքի ղեկավարի աշխատակազմ՝ ք.Քաջարան, հեռախոս՝ (0285) 3 23 41, ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ եւ ՀԳՄՀ վարչություն, հեռախոս՝ (0285) 2 35 50:

Վ.ԳԵՎՈՐԳՅԱՆ
Քաջարանի քաղաքապետ